

11-12 (301-302)
26.04.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուքին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՊԱԳԱՅԻ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՐՏԱԴՐԱՆԵՐ

Թեպետ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը, համաձայն որի Հայոց ցեղասպանության փաստի մասին խոսելը ենթակա է քրեական պատժի, շարունակում է սպառնալ այն ժխտողներին, այդուհանդերձ, Թուրքիայում կան մտավորականներ, որոնց համար պատմական արդարությունն ավելի կարևոր է, քան պետության կեղծ շահը: Թուրք գրող Թեմել Դեմիրերն, օրինակ, շուրջ 5 տարի է, ինչ հետապնդվում է վերոհիշյալ հոդվածով: Նրա ընդվզումը հենց տիրող գաղափարախոսության դեմ է, որը խոչընդոտում է հանրությանը՝ ճիշտ հասկանալու պատմական ճշմարտությունը:

Գրող, հրապարակախոս Թաներ Աքչամի «Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և Թուրքիայի պատասխանատվությունը» գիրքը նույնպես փաստում է, որ եթե պանթուրքիստական գաղափարաբանությունը չխանգարի, ապա հայ ժողովրդի հանդեպ Օսմանյան Թուրքիայի կատարած ոճրագործությունն ավելի ըմբռնելի կդառնա թուրք ժողովրդի համար: Աքչամի կարծիքով, ինչպես 100 տարի առաջ, հիմա էլ հայկական հարցը թուրքական հասարակության ուշադրության կենտրոնում է, պարզապես նրան արգելում են ասել այն, ինչը ներքուստ համարում են ճիշտ:

Դեպի Եվրամիություն ձգտող թուրքական հասարակությունը վերջին շրջանում նկատելիորեն ակտիվացել է, հատկապես հայկական խնդրի առնչություններում: Հրանտ Դինքի սպանության հետ կապված իրավաբանական հետազոտությունները նույնպես հիմք են տալիս ասելու, որ եթե իշխանությունների բացահայտ հակազդումը չլինի՝ «Մենք բոլորս հայեր ենք» թրջածին հանրագիրը կարող է վարակել ավելի ու ավելի մեծ ժողովրդական զանգվածների, ինչը միաժամանակ նշանակում է, որ հասարակության մեջ աստիճանաբար կկտրվի Հայոց ցեղասպանության ժխտողականության կարծրատիպը:

Ինչպես տեղեկացնում է PanARMENIAN.Net-ը, ցեղասպանության թեմայով գրված գրքերը Թուրքիայում արագորեն վաճառվում են: Որպես օրինակ է բերվում Ջուֆլու Լիվանելիի «Սերենադ» վեպը, որը Թուրքիայում բեսթսելլեր է դարձել: Երեք օրվա ընթացքում այս գրքի 50.000 օրինակ է վաճառվել: Ընդ որում, հիշյալ վեպը լոկ Հայոց ցեղասպանության մասին չէ, այդտեղ պատմվում է նաև Հոլոքոստի ու քրդերի մասին:

Նկատենք, ցեղասպանության թեմային թուրք գրողներն անդրադարձել են ավելի վաղ: Քենալ Թահիրը դեռևս 1956 թվականին իր «Գերված քաղաքի մարդիկ» հայկական թեմայի հետ կապ չունեցող ստեղծագործության մեջ օգտագործում է «հայկական կոտորած» տերմինը: Այս բացահայտման հեղինակ՝ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը գտնում է, որ գրքի մեջ տեղ գտած մի տողը, մի պարբերությունն անգամ ցույց է տալիս, որ ինչքան էլ պատմությունը նենգափոխվում է, այնուամենայնիվ, թուրք հասարակության մեջ ցեղասպանության հիշողությունը պահպանվում է: Ասել է թե՛ վաղ թե ուշ, թուրք ժողովուրդը ստիպված է լինելու ճանաչել իր նախնիների կատարած ահավոր ոճրագործությունն ու ներողություն խնդրել հայ ժողովրդից: Դա ապագայի ճշմարիտ պարտադրանքն է, և թերևս դրան են միտված նաև թուրք մտավորականների խոստովանությունները: Ափսոս, սակայն, որ նրանց թիվն առայժմ քիչ է:

ՈՂԲԱՆՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ, ԿՈՉԵՆՔ ԱՊՐՈՂԱՑ



Ժամանակը մեր հիշողությունից չի կարողացել ջնջել Հայոց մեծ եղեռնի ծանր մղձավանջները: Եվ անցնող ժամանակը մեր հոգու վերքերին անողորներն նոր սպիներ է ավելացնում: Մեզնից յուրաքանչյուրը մի եղեռնագող է, որ եղել է երեկ, կա այսօր ու կլինի վաղը... Կլինի, քանի դեռ Հայոց ցեղասպանության խնդիրը շարունակում է մնալ գերտերությունների քաղաքական շահերի ծիրում:

Մենք ճշմարիտ ու արդար ենք, բայց ոչ նրա համար, որ... անգոր ենք: Հակառակը, մենք ուժեղ ենք, որովհետև ցեղասպանվելուց հետո էլ դարձյալ կարողացանք կերտել մեր նոր հայրենիքը: Այս սուրբ հողակտորի վրա միաբանվելով՝ մենք հիմա ունակ ենք հաղթանակներ կռել, մեր պատմական հայրենիքի կորուսյալ տարածքներն, ի դեմս Արցախի, ծվեն առ ծվեն վերադարձնել ինքներս մեզ:

Սա է եղեռնի նահատակների լուռ պատգամը՝ զորանալ ու արժանապատվորեն գոյատևել գալիք դարերի մեջ:

Ողբա՛նք նահատակաց ու կոչե՛նք սպրողաց...

«Լուսարար»

ՔՆՆԱՇՐՋԱՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

Ավարտական, պետական ավարտական, միասնական քննությունների նախապատրաստության կարևոր բաղկացուցիչ մաս են կազմում փորձնական քննությունները: Ապրիլի 21-ին հանրապետության բոլոր դպրոցների 9-րդ, 22-ին՝ 12-րդ դասարաններում ԼԴՀ գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից բոլոր առարկաներից, յուրաքանչյուր դպրոցում վիճակագրությամբ մեկ առարկայից, անցկացվեցին փորձնական քննություններ: ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի տեղեկատվությամբ՝ ավագ դպրոցներում չեն անցկացվել հոսքային առարկաներից, այլ միայն պետական ավարտական մասով՝ հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա և հայոց պատմություն: Փորձնական քննությունները միասնական մասով չկան, կան միայն՝ ավարտական և պետական ավարտական: Իմաստն այն է, որ բոլոր աշակերտները մասնակցեն: Մյուս կողմից էլ միասնական և պետական ավարտական քննությունների կարգը հիմնականում նույնն է. քննություններն անց են կացվում կենտրոնացված ձևով, պատճենահանվում են ձևաթղթերը: Պետական ավարտական և միասնական քննությունների անցկացման տարբերությունը թերևս այն է, որ միասնականի ժամանակ տեսագրում է կատարվում:

ԳԹԿ տնօրենի պարզաբանմամբ, փորձնական քննությունների անցկացման գլխավոր նպատակն այն է, որ պեսզի շրջանավարտը լրիվ կարգով անցնի գործողությունները՝ սկսած մուտքից, հերթապահին ցույց տալով անձնագիրը, վիճակահանությամբ խումբը, տեղը որոշելը, մինչև ձևաթղթի լրացումը, որպեսզի տեխնիկական առունով երեխան չսխալվի: Մեկ անգամ ևս ձևաթուղթ լրացնի, մեկ անգամ ևս իմանա՛ ինչպես է

դա կատարվում, հոգեբանորեն նախապատրաստվի: Բացի այդ, փորձարկվում են նաև բոլոր պաշտոնական անձինք՝ քննական կենտրոնի ղեկավարից մինչև կազմակերպիչները և այլն: Յու. Քարամյանն ասաց, որ ինքը թույլատրել է միայն չպատճենահանել (ինչպես դա արվում է իրական քննության ժամանակ), քանի որ ոչ բոլոր դպրոցներում պատճենահանման սարք կա: Բայց իրական քննական կենտրոններին դա արտահրաված է: Փորձնական քննության ժամանակ քննական կենտրոնը տվյալ դպրոցն է, կազմակերպիչները՝ այդ դպրոցի ուսուցիչները,

կենտրոններում՝ միասնականի համար: Փորձնական քննության գլխավոր նպատակը, ինչպես ասվեց, ավելի շատ տեխնիկական ընթացքին տիրապետելն է, և թեկուզ ասվում է, թե գիտելիքը չի ստուգվում (գնահատականները չեն մտցվում դասամատյան), այնուամենայնիվ, ԳԹԿ-ն ստուգելով աշխատանքները, վերլուծություն է կատարում, արձանագրում թերությունները, իրազեկում դպրոցներին, որպեսզի մինչև իսկական քննությունները յուրաքանչյուրն իր մասով վերացնի դրանք: Աշակերտն էլ, ինչու չէ, հնարավորություն ունի այդ ընթացքում



բայց՝ ոչ մասնագետ: Ավելորդ դժվարություններ չստեղծելու համար դրանք չեն կենտրոնացվել: Իսկ իրական պետական ավարտական քննությունները կանցկացվեն 36 քննական կենտրոններում՝ պետական ավարտականի և 8 քննական

ուսուցչի հետ իր գիտելիքների պակասը լրացնել: Մի խոսքով՝ սա գլխավոր փորձ է մեծ քննությունից առաջ:

Դպրոցներն, անշուշտ, հնարավորություն են ունեցել ըստ պատշաճի նախապատրաստվել:

ԳԹԿ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ՏԱՐԻԱԿԱՆՈՒՄ

Փետրվարի 27-ից մարտի 30-ը ԼՂԳ ԳԹԿ-ի կողմից անց է կացվել հանրապետության ուսումնական հաստատությունների 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների արտաքին ընթացիկ գնահատում հետևյալ առարկաներից. 5-րդ դասարան՝ մաթեմատիկա, 7-րդ դասարան՝ հիմնականում բոլոր առարկաներից, 10-րդ դասարան՝ հոսքային-ներում՝ հայոց լեզու, հանրահաշիվ, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, անգլերեն և ռուսաց լեզու, միջնակարգ դպրոցներում՝ և ընդհանուր հոսքային դասարաններում՝ կենսաբանություն և աշխարհագրություն առարկաներից: Նորությունն այն է, ինչպես մեզ հետ զրույցում ասաց ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, որ նախորդ տարիներին արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ միջնակարգ և ընդհանուր հոսքերում անց էին կացվում հիմնականում հայոց լեզու, հանրահաշիվ կամ հայոց պատմություն, իսկ հիմա՝ բնագիտական առարկաներից: Եվ, քանի որ առաջին անգամ են անցկացվում, որպես կանոն՝ արդյունքները, կարելի է ասել, վատ են:

Ընդհանուր առմամբ, ստուգվել է 52 դպրոց, 195 դասարան՝ 2916 աշակերտների ընդգրկմամբ: «Ամբավարար» են ստացել 950 (33%), «բավարար»՝ 1363 (47%), «լավ»՝ 531 (18%), «գերազանց»՝ 72 (2%) աշակերտ: Նախորդ տարվա համեմատությամբ արդյունքները հիմնականում նույնն են: Առաջխաղացում որոշ առարկաներից կա 1-2 %-ով, մեծ տարբերություններ նկատվում են խորացված ուսուցմամբ և ընդհանուր հոսքերի միջև: Եթե ընդհանուր հոսքում «ամբավարար» ստացել է 55 %-ը, ապա խորացվածում՝ 19%-ը: Առաջինում «գերազանց» չկա, խորացված ուսուցմամբ հոսքում «գերազանց» է ստացել 2%-ը: Ընդհանուր հոսքերում «լավ» է ստացել 3%-ը, խորացվածում՝ 23%-ը:

Այս ուսումնական տարվա խորացված 11-րդ դասարանների հետ համեմատությունը ցույց է տալիս նրա առավելությունը 1-2 %-ով, ինչը է նշանակում է, որ 11-րդ դասարաններն ավելի պատրաստված են, քան 10-րդները: Այսինքն՝ գնալով որակը բարձրանում է: Իսկ ընդհանուր հոսքով 10-րդ և 11-րդ դասարաններում նույն վիճակն է՝ անբավարար է 50-60%-ը: Չի կարելի ասել, թե կտրուկ աճ կա խորացված հոսքերում, կտրուկ կլինի այն ժամանակ, երբ որ «ամբավարար»-ներ չլինեն, կարծում է ԳԹԿ տնօրենը:

Հանրահաշիվից այս տարի 9%-ն էր անբավարար, նախորդ տարի՝ 16%-ը: Այսինքն՝ որոշ առարկաներից տարբերություններ կան: Բայց ավելի վատ է վիճակը 10-րդ դասարաններում անգլերենից. 70%-ը՝ «անբավարար» է: 11-րդում վիճակն ավելի լավ է:

7-րդ դասարանում ընդհանուր ստուգվել է 1033 աշակերտ, որից 43%-ը «անբավարար» է ստացել: Նախկինում 41%-ն էր «անբավարար», այսինքն՝ «անբավարար»-ներն աճել են 2%-ով, բայց մյուս գնահատականները պահպանվել են: 1%-ով աճել է «լավ»-ը: Այստեղ էլ չի կարելի ասել, որ տարբերությունը մեծ է: Ըստ առարկաների նույնպես վիճակը նույնն է. հայոց պատմություն՝ 62% «անբավարար», նախորդ տարի՝ 64%, հայոց լեզվից և կան փոփոխություններ չկան՝ 31%:

Մեծ փոփոխությունը հիմնականում 4-5-րդ դասարաններում է՝ աճ կա դեպի լավը: Սկզբում տարրական դասարանները բարձրորդի վիճակում էին: Երկու տարի է, տարբերություն զգացվում է: Առաջին կիսամյակում մայրենիի ընթացիկ գնահատման ժամանակ արձանագրել ենք, որ առաջընթաց կա, հիմա էլ նույն բանն ասում ենք մաթեմատիկայի վերաբերյալ: Եթե 7-րդ դասարանում, ինչպես վերև

ասացինք, էական տարբերություններ չկան, ապա 5-րդում ահա այսպիսի տարբերություններ են: «Ամբավարար»-ների քանակն անցյալ տարի 37% էր, հիմա՝ 23%: «Գերազանց»-ների տարբերությունը մեծ է՝ 4 և 5%, բայց ահա, «լավ»-երի տարբերությունը մեծ է: Հիմա 25%-ն է լավ, նախկինում՝ 17%-ը: Ինչով է դա բացատրվում: Սովորաբար տարրականից միջին դպրոց անցումը բացասաբար է անդրադառնում ուսման որակի և առաջադիմության վրա: Նախորդ տարվա արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներից ելնելով՝ կրթության և գիտության նախարարը կոնկրետ խնդիր էր դրել դասավարների առաջ և վերահսկողություն իրականացրել՝ արդյունքները բարելավելու համար: Այդ ուղղությամբ աշխատանքները որոշակի արդյունքներ են տվել. նախորդ տարվա համեմատությամբ 14% աճ կա: «Չեն աւսում», թե արդյունքները գոհացուցիչ են, տարրականում 23% «անբավարար»-ները չի կարելի լավ համարել, բայց նախորդ ուստարվա համեմատությամբ առաջընթաց կա, - ասում է ԳԹԿ տնօրենը, ապա շարունակում միտքը. ընդհանրապես, հիմնական դպրոցը կաղում է: 43% «անբավարար», 2%՝ «գերազանց», 12% «լավ»՝ չի կարելի լավ արդյունքներ համարել»:

Մեր Սահմանադրությամբ պետականորեն պարտադիր է հիմնական կրթությունը: Ավագ դպրոցի առնչությամբ միշտ ասում ենք, որ այնտեղ ամենալավ ուսուցիչները պետք է աշխատեն, քանի որ տալիս են խորացված գիտելիքներ: Յու. Քարամյանի կարծիքով՝ պարտադիր չէ, որ ավագ դպրոցի մասնակավարժը ամենախորացված գիտելիքներն ունենա. եթե նա լավ մանկավարժ է, գիտելիքների հիմնական բազա ունի, կկարողանա աշակերտներին ճիշտ ուղղորդել ինքնուրույն աշխատանք

քի: Բայց հիմնական դպրոցում լավ ուսուցիչ ունենալն ավելի կարևոր է: Նախորդ տարի երկրաչափությունից անցկացված արտաքին գնահատումը ցույց է տվել, որ հիմնական դպրոցում ուսուցիչներ կան, որ տարրական հարցերում անգամ կաղում են: Բայց չէ՞ որ երեխան բազային գիտելիքներ ստանում է հենց այստեղ: Հետևաբար, ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի հիմնական դպրոցին՝ հերթական ստուգումից հետո նորից կոչ է անում ԳԹԿ տնօրենը:

Կա՞ն տարբերություններ քաղաքի և գյուղի դպրոցների միջև: Յու. Քարամյանը մեծ տարբերություններ չի տեսնում, իհարկե՝ բացառությամբ խորացվածի՝ ասելով, որ միշտ էլ ուսուցիչ է կախված: Գյուղական բնակավայրեր կան, որտեղ աշակերտներն ավելի լավ արդյունքներ ունեն, քան շրջակայքում: Մեծ դերն ուսուցիչն է: Իսկ այն հարցին, թե լավ ուսուցիչների կուտակում որտեղ կա, պատասխանն այս էր՝ հասկանալի է, որ քաղաքում մրցակցություն կա: Իսկ որտեղ մրցակցություն կա, այնտեղ ուսուցիչներն աշխատում են իրենց վրա: Եթե որևէ առարկայից դպրոցում մեկ մասնագետ է աշխատում, իհարկե, նա չի զարգանա: Իսկ եթե կոլեկտիվում նույն մասնագիտությամբ 3-4 ուսուցիչ կա, մեթոդխորհուրդ է ստեղծվում, արդեն նա զարգանում է՝ մեկը մյուսից լսելով, ուսումնասիրելով: «Ես կողմնակից եմ, որ լինեն զուգահեռ դասարաններ, որ աշակերտները կենտրոնացվեն: Միայն այսօրվա մասին չմտածենք: Պետք է մտածել նաև հետագայի մասին, որ երեխան լավ գիտելիքներով ավարտի դպրոցը: Դպրոցների կենտրոնացումն անխուսափելի է», - համոզված է ԳԹԿ տնօրենը:

«ԼՈՒՍԱՐՈՒ»

ՔՆՆԱԾՐՋԱՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

1 ԳԹԿ-ի կողմից ուղեցույցները դեռևս հունվար ամսին են ուղարկվել դպրոցներ, թեստերը կազմվել ծրագրին համապատասխան՝ հաշվի առնելով նաև շտեմարանները: Դրանք նայվել են փորձագետների կողմից: Բոլոր անհրաժեշտ նյութերը՝ սկսած աշխատակարգից, ընթացակարգերից, արձանագրություններից՝ փաստաթղթային մի մեծ փաթեթ, նախօրոք ուղարկվել են դպրոցներ: Թերևս կլինեն մարդիկ, ովքեր կմտածեն, թե ինչու են ամեն տարի այդպես մասնակրկիտ կատարվում այդ աշխատանքները, երբ կազմակերպիչներն ամեն ինչի մասին գիտեն, մի՞թե բավական չէ շրջանավարտներին բաժանել թեստերը, այդ մասով միայն բացատրություններ տան և համարեն փորձնական քննություն անցկացրած:



Դա ստուգողական պարապմունք չէ, որտեղ ստուգվում են գիտելիքները: ԳԹԿ տնօրենը համաձայն է այն մտքին, որ արդեն 4-5-րդ տարին անցկացվող փորձնական քննությունների ընթացակարգին կազմակերպիչները հիմնականում տիրապետում են, բայց ամեն անգամ արարողակարգը պետք է կրկնվի, քանզի աշակերտների համար առաջին անգամ է անցկացվում:

Այս տարվա պետական ավարտական և միասնական քննություններն աննախադեպ են: Ունենք միջնակարգ և ավագ դպրոցի 1732 շրջանավարտներ: Նրանք կլինեն 12-րդ դասարանի առաջին շրջանավարտները: 2008-ից ի վեր շրջանավարտների այսպիսի քանակ չի եղել: Միասնական քննություններին հայտագրվել է 1261 հոգի (2010-ին՝ 870, 2011-ին շրջանավարտներ չունեին): Այսինքն՝ նրանց 73%-ը դիմորդներ են: 2010-ի համեմատ 44%-ով ավելացել է, իսկ դիմորդների քանակը՝ 6%-ով: Այստեղ մեծ տարբերություններ կան ըստ

շրջանների: Ստեփանակերտում շրջանավարտների 93%-ն են դիմորդներ: Հասկանալ կարելի է. ավագ դպրոցների, ռազմական վարժարանի, ֆիզմաթի շրջանավարտները լրիվությամբ հայտագրվել են բուհի ընդունե-



լությամբ, մասամբ՝ նաև պարապմունքի ուսումնարանի և հ. 3 դպրոցի: Շրջաններում շրջանավարտների 60-70%-ն է հայտագրվել բուհի համար: Նախկինում էլ այդպես էր:

Մի հետաքրքիր վերլուծություն էլ ներկայացրեց ԳԹԿ տնօրենը. ինչո՞ւ 1732 շրջանավարտ: 2009թ. երբ նրանք ավարտում էին 9-րդ դասարանը, 2474 հոգի էին: Մոտ 700-ով պակասել են: Իսկ որտե՞ղ են՝ միջին մասնագիտականում, արհեստագործականում: Նման տարբերությունը ԳԹԿ տնօրենը լավ ցուցանիչ է համարում: Հարցազրույցներին միշտ ասում է, որ ավելի լավ ցուցանիչ կլինի հետագայում, երբ սովորողների 40%-ը գա ավագ դպրոց, իսկ մնացած 60%-ը բաժանվի միջին մասնագիտական և արհեստագործական հաստատությունների վրա: Եթե 20-30%-ով էլ պակասեն, պատկերն ավելի իրական կլինի: Ավագ դպրոց պետք է գնա ավելի խոր գիտելիք ունեցողը, որպեսզի հետագայում զբաղվի գիտությամբ:

Ըստ առարկաների՝ դիմորդների վիճակագրությունն այսպիսին է. հայոց լեզու, գրականություն՝ 937 հոգի, մաթեմատիկա՝ 578, հայոց պատմություն՝ 421, ռուսաց լեզու՝ 420 (կտրուկ աճ կա, որովհետև քննություններին փոխարինում է օտար լեզուներին), բայց դրանից կտրուկ չի նվազել անգլերենի համար հայտագրվածների քանակը՝ 390, ֆիզիկա՝ 218, քիմիա՝ 81, կենսաբանություն՝ 109, աշխարհագրություն՝ 30, ընդհանուր պատմություն՝ 52 հոգի: Թվերը հիմնականում ավելի մեծ են, քան 2010-ին, բացի ընդհանուր պատմությունից, որում 2-ով նվազել են:



Պետական ավարտական մասով հայտագրվել են. հայոց լեզու, գրականություն՝ 820 հոգի, մաթեմատիկա՝ 1227, հայոց պատմություն՝ 1330, ռուսաց լեզու՝ 974, անգլերեն՝ 28, ֆիզիկա՝ 370, քիմիա՝ 25, կենսաբանություն՝ 456, աշխարհագրություն՝ 606 հոգի: 9-րդ դասարանների համար կենտրոնացվելու են 2 առարկաներ՝ հայոց լեզու, գրականու-

թյուն և մաթեմատիկա: 2036 հոգի կհանձնի հայոց լեզու, գրականություն, 2032-ը՝ մաթեմատիկա (տարբերությունը՝ երկուտեղից պատճառով է): Էքստեն կարգով 34 հոգի քննություն կհանձնի 9-րդ դասարանում, 48-ը՝ 12-րդ:

Չնայած հայտագրվածների աճ կա 6%-ով՝ պայմանավորված շրջանավարտների թվաճով, սակայն որոշ առարկաներից տեղերի նվազում կա տոկոսային հարաբերությամբ՝ հայոց պատմությունից, ֆիզիկայից, կենսաբանությունից: ԳԹԿ տնօրենը սա դրական է համարում. նշանակում է՝ շրջանավարտները հիմա ավելի լավ են կողմնորոշված: Դրանում առկա է ավագ դպրոցի դերը: Առաջին տարիներին դիմորդները հայտագրվում էին 7-8 առարկաներից, հիմա էլ կան, սակայն նրանց

թիվը մեծ չէ: Հայտագրվել է, ասենք, քիմիա և ռուսաց լեզու առարկաներից՝ բնագիտական և հումանիտար: Այս առարկաները կապ չունեն իրար հետ, նշանակում է՝ շրջանավարտը կողմնորոշված չէ: Առաջին տարիներին չկողմնորոշվածները շատ են եղել: Ցուցակները ցույց են տալիս, որ մասնագիտական կողմնորոշումն աստիճանաբար հստակեցվում է, և դիմորդները հայտագրվում են կոնկրետ իրենց նախընտրած մասնագիտության քննություններին:

Դիմորդների քանակը մեծացել է մի հանգամանքով ևս պայմանավորված. նաև ոչ պետական բուհեր ընդունվողները պետք է միասնական քննություններ հանձնեն:

Ս. ԽԱԶՆՏՅԱՆ

ՈՒՋՍԱՆՎՈՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԾՎԻԿՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Ավանդական ամենամյա «Արծվիկ» ռազմամարզական խաղերի հանրապետական հերթական մրցումները ապրիլի 18-ին մեկնարկեցին 33 Ազգային հերոս, ԼՂՀ «Ռուկե արծիվ» շքանշանակիր, սպարապետ Վազգեն Սարգսյանի անունը կրող գործարանում:

Մրցումներին մասնակցում էին ութ ջոկեր՝ հանրապետության շրջաններից և Ստեփանակերտ քաղաքից, բացի Շահումյանի շրջանից: Դրանք այն ջոկերն են, որոնք հաղթող են ճանաչվել քաղաքային և շրջանային մրցումներում:

Ստեփանակերտ քաղաքը ներկայացնում էր քաղաքային փուլում հավասար միավորներ հավաքած երկու ջոկ, որից մեկը՝ ոչ մրցութային: Յուրաքանչյուր ջոկում ընդգրկված էր 6 տղա և 3 աղջիկ:

Մրցումների մեկնարկին թիմերի պատրաստության մասին ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ, ԱԱՄ նախագահ, գեներալ-մայոր Ս. Կարապետյանին զեկուցեց գլխավոր մրցավար, ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖԴ և ԶԿԶԷ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը:

Բացելով հանրապետական մրցումներին միջոցառում հանդիսավոր արարողությունը՝ Վ. Գրիգորյանը այն համարեց յուրօրինակ

րեն ավագների գործը շարունակելու պատրաստակամության հայտ են ներկայացնում:

Վ. Խաչատրյանը հույս հայտնեց, որ պատանիները ջանք ու եռանդ չեն խնայի հաղթանակի հասնելու համար, իսկ արդյունքում կհաղթի Արցախի պատանի արծվիկը:

ԼՂՀ ԱԺ պաշտպանության, անվտանգության և օրինապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ժ. Գալստյանը պատանի արծվիկների ու շահարկողները հրավիրեց այն փաստին, որ խաղերի մեկնարկը սկսվում է մի գործարանում, որը Գոյա-մարտի ընթացքում մարտական փայլուն կենսագրու-

սակայն ընդհանուր առմամբ նրանք լավ էին նախապատրաստվել հանրապետական փուլին և ամենակարևորը, կար ձգտումը՝ հասնել հաղթանակի: Իսկ հաղթել՝ այսօրվա աշակերտի համար մշտական է հաղթանակը վաղվա զինվորի:



թյուն է արձանագրել, իսկ նրանց համեմատեց այն «ճուտ»-ների հետ, որոնք պատերազմի ժամանակ կամավորագրվել են Արցախում գործող բոլոր գործառնակներին:

Ժ. Գալստյանը նշեց, որ մի քանի տարի հետո արծվիկների հերթն էլ կգա համալրելու ՊԲ շարքերը, եւ իրենց հակառակորդին կտեսնեն հեռադիտակից: Այն հակառակորդին, ուն հետ ընդմիջտ դատապարտված ենք ապրել կողք կողքի: Ուստի կոչ արեց միշտ լինել պատրաստ եւ աշխույժ:

Բոլոր ջոկերը ներկայացել էին ԼՂՀ կառավարության աջակցությամբ ծեռք բերված արծվիկների համագագեստով:

Եռօրյա համառ մրցապայքարում 2012թ. «Արծվիկ» ռազմամարզական խաղերում պատվավոր առաջին տեղը զբաղեցրեց Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի ջոկը, երկրորդ տեղը՝ Մարտունու արհեստագործական ուսումնարանի, իսկ երրորդը՝ Զաղրուբի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ջոկը: Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի ջոկը գրավեց ոչ մրցութային երկրորդ տեղը:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ պաշտպանության, կրթության և գիտության նախարարությունների, ԱԱՄ կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների և թանկարժեք նվերների:

Կրթության և գիտության նախարարության կողմից մրցանակային տեղեր գրաված թիմերի բոլոր անդամները, նրանց զինղեկներն ու բոլոր մրցածների արդյունքներով անհատական հաշվարկով հաղթողներ ճանաչված Անդրեյ Մկրտչյանը, Գրիգորի Գաբրիելյանը (Մարտունու արհեստագործական ուսումնարան) և Անդրանիկ Գրիգորյանը (Ստեփանակերտի հ. 11 դպրոց) արժանացան դրամական խրախուսանքի: Պատվոգրեր և թանկարժեք նվերներ ստացան նաև հրաձգությունից, շարախի պատրաստությունից, ԿԺ-ի ոչ լրիվ քանդում, հավաքում և պահեստառուփի լիցքավորումից, ֆիզիկական պատրաստությունից և քաղաքացիական պաշտպանությունից լավագույն արդյունքներ ցույց տված աշակերտները, ինչպես նաև լավագույն ջոկի հրամանատար Նարեկ Զայնապետյանը (Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոց) քաղաքացիական մրցածներում լավագույն արդյունքներ ցույց տված Ստեփանակերտի հ. 8, հ. 11, Շուշիի Մուրա-ցանի անվան ավագ դպրոցների ու Մարտունու արհեստագործական ուսումնարանի ջոկերը: Պատվոգրերով և թանկարժեք նվերներով պարգևատրվեցին նաև ԼՂՀ ԿԺ փրկարար ծառայության կողմից: Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԺ փրկարար ծառայության տնօրեն, գնդապետ Ա. Զարությունյանը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրումները կատարեց նախարար Վլադիկ Խաչատրյանը: Նա շնորհավորեց բոլոր հաղթողներին և շնորհակալություն հայտնեց մրցումների մասնակիցներին՝ ակտիվ մասնակցության և համուն թիմի հաղթանակի կամային բարձր հատկանիշների դրսևորման համար:

Պատանի արծվիկները և հանրապետական առաջնության կազմակերպիչները հրաժեշտ տվեցին իրար՝ եկող տարի կրկին հանդիպելու ակնկալությամբ և մրցակցության ոգին անշեղ պահելու ցանկությամբ ու նտայնությամբ:

Մուրադ ՇԱՐԱՄՆԱՅԱՆ

Հուլի

ԿԱՐՈՏԻ ԿԵՐԱՊՐՈՒՄՆԵՐ՝ ԶԱՆ ՏԱՐՎԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ



Աշխարհի գալու օրից սնարիս վերև իմ ավագ հորեղբոր՝ Արթուր Մկրտչյանի մեծադիր նկարն են տեսել՝ լուսաշող ժպիտը դեմքին: Երբ մանուկ էի, ինձ թվում էր, թե նա միայն ինձ է ժպտում, իսկ երբ մեծացա, հասակ առա, շատ բան իմացա նրա կյանքի ու գործունեության մասին: Իմացա, որ այդ ժպիտը ծագող արևի պես լուսավորել է պայքարի ելած մեր հերոս ժողովրդի ճանապարհը՝ ազատության ու անկախության ոգեկոչելով նրան:

Իմացա նաև, երբ պահը գալիս է, Արթուր Մկրտչյանի մանա մարդկանց ազգը, ժողովուրդն է աշխարհ բերում: Իմ հարազատի՝ Արթուր Մկրտչյանի մասին անմոռանալի շատ հուշապատումներ կան՝ ամուր դաջված հիշողությանս մեջ:

Մանկական տարիներից սկսած՝ իմ հետաքրքրությունը նրա հանդեպ անսպառ էր: Ինչքան շատ էին պատմում հարազատներս նրա մասին, այնքան ավելի շատ բան էի ուզում իմանալ: Գիշերում եմ, տարիներ առաջ էր, կրտսեր հորեղբայրս՝ Հովհիկը, որ այն ժամանակ սովորում էր Արցախի պետական համալսարանում, արձակուրդ էր եկել գյուղ: Ու նա պատմեց.

- Արթուրը մեր հոգին էր, մեր տան աստղը, բոլոր հարազատներից ամենասիրելին, ամենաթանկը: Անչափ մտերիմ էինք ու ջերմորեն էինք կապված իրար հետ: Մեր ամեն մի հանդիպում կատարյալ տոնակատարության էր վերածվում:

...Երբ սկսվեց Արցախյան շարժումը, ես ուրիշ տարեկան անհոգ մանուկ էի: Արթուրն առաջվա պես հաճախակի չէր այցելում մեզ: Միայն ժամանակ առ ժամանակ գիշերվա ժամերին մեծանակ ընկերներով հայտնվում էր մեզ մոտ, մի քիչ հանգստանում ու մինչև լույսը բացվելը նորից հեռանում:

Ձգում էի, որ ինչ-որ բան է կատարվում երկրում, պայքար ու կռիվ է ծավալվում, որն իր մեջ շատ-շատերի հետ ներառել էր նաև սիրելի հորեղբորս: Ես զգում էի, որ Արթուրի համար ժամանակը թուփեցրել էր հաշվվում: Առաջվա պես նա ինձ հետ երկար չէր գրուցում ու կատակում: Հրջանի շատ գյուղերում գնալով կողմերի միջև պայքարը լարվում ու զինված բնույթ էր կրում:

Մեր գյուղը կռվի գոտուց համեմատաբար հեռու էր: Հայաստանից եկող ուղղաթիռներն այստեղ էին վայրէջք կատարում:

Ես նրանց մշտական դիմավորողն ու ուղեկցողն էի: Մի անգամ էլ, երբ սովորականի պես ուղղաթիռը վայրէջք կատարեց գյուղում, տեսա, որ հեռվից մի մեքենա է գալիս դեպի ուղղաթիռ՝ զինված ֆիդայիների մի ջոկառ մեջ:

Երբ նրանք իջան մեքենայից, ես հեռվից իսկույն ճանաչեցի Արթուրին, վազեցի ու գիրկն ընկա: Նա ջերմորեն համբուրեց ինձ ու խոստացավ երեկոյան այցելել մեզ: Բայց իրավիճակն այլ կերպ դասավորվեց: Ուղղաթիռի հրամանատարի և Արթուրի միջև սուր վեճ առաջացավ: Արթուրն ուզում էր, որ ուղղաթիռը թռիչքը շարունակի մինչև Հաղրուբ՝ ծանր վիրավոր ազատամարտիկին երևան հասցնելու համար, իսկ ուղղաթիռի հրամանատարը, չզիտես ինչ պատճառով, հանձն չէր առնում: Ես չիմացա, թե ինչպես լուծվեց հարցը, միայն տեսա, որ Արթուրը մտեց ուղղաթիռը և օդ բարձրացավ:

Ավա՛ղ, դա մեր վերջին հանդիպումն էր, վերջին գրկախառնությունը ու վերջին համբույրը: Հետո, երբ նա Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց, ես նրա հետ հանդիպելու հնարավորություն չունեցա, թեև շատ էի փափագում...

- Այս հուշ-պատմությունից շատ տարիներ են անցել, շատ ջրեր են հոսել, բայց հիմա էլ, երբ երկնակամարում ուղղաթիռ է հայտնվում, ակամայից հիշում եմ այդ պատմությունը ու կարոտած աչքերով հետևում երկնքում սավառնող ուղղաթիռի թռիչքին: Գուցե հրա՞ջ կատարվի: Գուցե ուղղաթիռը նորից ե՞տ բերի մեր սիրելի հորեղբորը...

Ավա՛ղ... Նա թշնամուն խաղաղություն պարտադրող Արցախ աշխարհի հազարավոր հերոսների պես վերադարձավ գրույց ու լեգենդ, հուշ ու հուշարձան դարձած:

Լուսինե ԴԱԴԱՅԱՆ

ԱրԴՀ բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի



նակ տոն դպրոցականների համար, քանի որ մեր հանրապետությունում մեծ մասսայականություն վայելող այդ խաղերին ամեն տարի նրանք սպասում են ամհամբերությամբ: Նա հույս հայտնեց, որ հանրակրթական դպրոցների նախագորակոչային տարիքի դպրոցականների միջև մրցումները Մայիսյան եռատոնի նախօրեին կլինեն զեղեցիկ նվեր: Կլինի արժանի ու առողջ մրցակցություն, և մասնակիցները կցուցաբերեն ապագա հայրենյաց պաշտպանին վայել կամք ու տոկունություն:

Մրցումներին մասնակիցները և բոլոր ներկաները թարմ ծաղիկներ դրեցին Վազգեն Սարգսյանի հուշարձանին:

Մատաղ սերնդի դաստիարակության գործուն բարձր զննհատելով ռազմամարզական խաղերի դերն ու նշանակությունը՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը ընդգծեց, որ ավանդական դարձած մրցումներն այս տարի առանձնահատուկ են նրանով, որ կազմակերպվում են ՊԲ կազմավորման եւ Շուշիի ազատագրման 20-ամյակի նախաշեմին: Տոն, որ ռազմամարզական խաղերի մասնակիցներին ստիպում է լինել ավելի նպատակալաց ու նպատակամետ:

20-ամյակի խորհուրդը պատանիներին ավելի հասու դարձնելու համար ԿԳ նախարարն անդրադարձավ Պաշտպանության բանակի կազմավորմանը, նրա անցած մարտական փառավոր ուղուն ու նվաճած հաղթանակներին: Շեշտեց, որ արծվիկները ռազմամարզական խաղերին առանձնահատուկ ուշադրություն դարձնելով՝ փաստո-

րեց միշտ լինել պատրաստ եւ աշխույժ: Ռազմամարզական խաղերի մասնակիցներին իրենց բարենադրանքները հղեցին ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գ. Առստամյանը եւ ԼՂՀ Ազատամարտիկների միության «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպության անդամ Գ. Զակոբյանը: Նրանք իրավազիտորեն գտնում են, որ մեզ թույլ երիտասարդներ պետք չեն, մենք պետք է միշտ ուժեղ լինենք, քանի որ



ինքնահաստատման ու աշխարհին ճանաչելի դառնալու մեր երթը շարունակվում է...

Արծվիկների անունից խոսք ասաց Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի աշակերտ Դավիթ Ջավադյանը՝ վստահեցնելով, որ ուժի և ուժեղի իրավունքի սկզբունքի որդեգրմամբ կծգտեն համառ մրցապայքարից հաղթող դուրս գալ:

Ելույթներին հաջորդեց արծվիկների հանդիսավոր երթը, իսկ մրցումները մեկնարկեցին վիճակահանությանը: Եռօրյա մրցապայքարը ջոկերի միջև անցավ բուռն, թե՛ մթնոլորտում: Չնայած որոշ թիմերի մասին կարելի է խոսել վերապահումով,

ՄԵԹՈԴՓՈՒՆԶ

ՇԵՏԱՔՐԵՒԻ ՕՐ ԾԱՂԿԱՇԱՏՈՒՄ

Դպրոցը, հատկապես գյուղական վայրում, միայն կրթական հաստատություն չէ, այլ նաև մշակութային օջախ: Այն ոչ միայն իրականացնում է տվյալ բնակավայրի երեխաների կրթության գործը, այլև իր շուրջը համախմբում հասարակությանը, բազմաբնույթ միջոցառումներով հետաքրքիր դարձնում գյուղական առօրյան: Դրանում մեկ անգամ ևս համոզվեցինք՝ ներկա գտնվելով Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում վերջերս կազմակերպված միջոցառմանը: Առիթը փնջային մեթոդմիավորումն էր: Ինչպես տեղեկացրեց շրջվարչակազմի կրթության բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանը, շրջանի 33 դպրոցներն ընդգրկված են 8 մեթոդմիջոցում, որոնք համակարգված աշխատանք են տանում: Կազմակերպում են պլանային միջոցառումներ, հանդիպումներ՝ փնջի մեջ մտնող դպրոցների համապատասխան մասնագետների մասնակցությամբ, որպեսզի լավագույն փորձը տարածվի սկսնակ և երիտասարդ ուսուցիչների շրջանում: Երկրորդ կիսամյակում նմանատիպ մի քանի հանդիպումներ են կազմակերպվել: Միջոցառումը սովորաբար բաղկացած է լինում երեք մասից՝ ընդօրինակելի բաց դաս, լիազումար նիստ և գեղարվեստական միջոցառում՝ տարվա տվյալ եղանակին համապատասխան: Կոնկրետ Ծաղկաշատում փնջային մեթոդմիավորումը մաթեմատիկայից էր: Մեթոդմիջոցում ընդգրկված են Խնձրիստանի (որը նաև փնջի հենակետային դպրոցն է, ղեկավար՝ Անահիտ Բալայան), Գլխի, Ռևի, Խաչենի, Ծաղկաշատի դպրոցները: Բաց դաս էր կազմակերպել ուսուցչուհի Նադեժդա Զայրապետյանը՝ 12-րդ դասարանում: Ենթաշրջանն ընդգրկող դպրոցների ներկայացուցիչներից բացի, ներկա էին ԼՂԳ կրթության և գիտության ու շրջանի կրթության բաժնի պատասխանատու աշխատողներ:

լի ակտիվացրեց աշակերտներից մեկը՝ Մարատ Պետրոսյանը, ներկայացնելով զուգահեռազօծի մասին իր գրած հեքիաթը (այն նաև նկարազարդված ցուցադրվեց), որն այս բովանդակությունն ուներ.

«Լինում է, չի լինում ABCD թագավորությունը: Թագավորն է լինում K արքան և նա ցանկանում է, որ թագավորության մայրաքաղաքը դառնա Օ-ն, որը գտնվում է երկրի կենտրոնում: Այնտեղ գտնվող Օ դրակը պետք է հավասար հեռավորության վրա գտնվի A և C, B և D կետերից և պետք է գտնվի AC և BD ուղիղների վրա: Շինարարները սկսում են կատարել չափումներ և դրակը կառուցել թագավորի նշած ճիշտ տեղում: Անցնում են տարիներ, և թագավորը ցանկանում է իմանալ՝ արդյո՞ք իր թագավորության AB և DC սահմանները հավասար են: Շինարարները սկսում են չափել այդ կողմերը, և հանկարծ մի իմաստուն ծերունի ասում է. «Եթե քառանկյան անկյունագծերը հատվում են և հատման տեղում կիսվում, ապա այդ քառանկյունը զուգահեռազօծ է»: Այսինքն՝ AB և DC, AD և BC սահմաններն իրար հավասար են: Շինարարները չեն հավատում և կատարում են չափումներ: Համոզվում են, որ ծերունին ճիշտ է: Այդպես



դաբ դառնա Օ-ն, որը գտնվում է երկրի կենտրոնում: Այնտեղ գտնվող Օ դրակը պետք է հավասար հեռավորության վրա գտնվի A և C, B և D կետերից և պետք է գտնվի AC և BD ուղիղների վրա: Շինարարները սկսում են կատարել չափումներ և դրակը կառուցել թագավորի նշած ճիշտ տեղում: Անցնում են տարիներ, և թագավորը ցանկանում է իմանալ՝ արդյո՞ք իր թագավորության AB և DC սահմանները հավասար են: Շինարարները սկսում են չափել այդ կողմերը, և հանկարծ մի իմաստուն ծերունի ասում է. «Եթե քառանկյան անկյունագծերը հատվում են և հատման տեղում կիսվում, ապա այդ քառանկյունը զուգահեռազօծ է»: Այսինքն՝ AB և DC, AD և BC սահմաններն իրար հավասար են: Շինարարները չեն հավատում և կատարում են չափումներ: Համոզվում են, որ ծերունին ճիշտ է: Այդպես



ծողովուրդն իմանում է զուգահեռազօծի 3-րդ հայտանիշի մասին»:


Ի դեպ, Մարատը, որը պատրաստվում է իրավաբան դառնալ և պատմությունից ունեցած իր գիտելիքներով մեկ այլ հանդիպման ժամանակ հիացրել էր կրթության շրջանային բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանին՝ Հայոց ցեղասպանության առնչությամբ այդ օրերին Ֆրանսիայի սենատում ընթացող գործողությունների վերաբերյալ, ամեն

նակտիվն էր դասին, ուսուցչուհին անգամ ափսոսանք հայտնեց, որ նա չի հայտագրվել մաթեմատիկայի միասնական քննությանը:

Մյուս աշակերտները վերցնում են ուսուցչի սեղանին դասավորված մեկական քարտ: Քարտերի մի մասը պարունակում էր խնդիրներ, մյուսը՝ լուծումները: Աշակերտները փնտրելով գտան իրենց զույգին և «հաշվետվության» համար մոտեցան ուսուցչին:

Անուրոզը համեմատաբար դժվար փուլ էր: Աշակերտ-ծեռներեց-գործարարներին առաջարկվում է նախօրոք գնահատել խնդիրը: Ով տվեց ամենաշատ միավորը, խնդիրը նրան հասավ: Այստեղ էլ հաջողակը Մարատն էր:

Դասին ներկայացվեց նաև գործնական աշխատանք՝ զուգահեռազօծ կիրառել կյանքում, կենցաղում: Աշակերտները ներկայացրին տեխնոլոգիայի ժամին պատրաստած փայտյա իրեր, հրուշակեղեն՝ զուգահեռազօծի տեսքով: «Մամլո ասուլիսի» ներկայացուցիչները ոչ միայն հարցեր տվողի դերում էին, այլև առաջադրանքներ լուծողի: Նրանց հրամցվեց կլոր տորթ՝ վրան 7 կարպներ: Հանձնարարված էր դանակի օգնությամբ ըն-



դամները երեք ուղիղ գիծ տանելով տորթը կտրել այնպես, որ յուրաքանչյուր կտորի վրա լինի մեկ կարպ: «Մամլո ասուլիսի» ներկայացուցիչները գլուխ գլխի տված՝ իրաջրին առաջադրանքը: Բացի այդ, նրանք լուծեցին նաև ռեբուս:

Դասին ապահովվեց նաև միջառարկայական կապը: Եվ քանի որ տոնական շրջան էր, աշակերտները դասի ավարտին արտասանեցին բանաստեղծություններ՝ նվիրված գարնան տոներին:

Դասը տոնական էր, աշակերտները ծաղիկներ ու բացիկներ նվիրեցին կանանց, իսկ ուսուցչուհին՝ գրիչներ սաներին՝ որպես գեղեցիկ հուշ դաս-միջոցառումից:

Հասկանալի է, որ ամեն օր չեն մնան դասեր անցկացվում, բայց մեկ-մեկ էլ այդպես կազմակերպելով՝ մեծացնում են հետաքրքրությունը առարկայի հանդեպ, ազատվում միօրինակությունից:

«Մաթեմատիկան կարգապահ է դարձնում միտքը, վարժեցնում տրամաբանությունը»: Կալինինի այս մտքի շուրջ էր ուսուցչուհու զեկուցման թեման:

Ս. Զայրապետյանը անցյալ տարի դարձյալ բաց դաս էր կազմակերպել և լույս ընծայել պատի թերթ «Արվեստի լույսը» վերտառությամբ, որտեղ ներկայացվել է հանճարեղ նկարիչների կապը մաթեմատիկայի հետ:

Կրթության շրջանային բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ասրյանի խոսքով, մի քանի տարի առաջ Ծաղկաշատի դպրոցում ոչ այնքան առողջ բարոյախոգեբանական մթնոլորտ էր տիրում, ինչը բացասաբար էր անդրադառնում ուսումնադաստիարակչական գործընթացին: Պատկերը հիմա այլ է: Երիտասարդ տնօրեն Անահիտ Կասյանի ջանքերով ոչ միայն կուռ կոլեկտիվ է ստեղծվել, այլև ակտիվորեն գործում է դպրոց-համայնք կապը, ինչից շահում են և դպրոցը, և համայնքը: Դրա մի վառ ապացույցն էր միջոցառման երրորդ մասը կազմող՝ աշակերտների ուժերով գյուղի ակունքում կազմակերպված ցերեկույթը՝ նվիրված բնության զարթոնքն ավետող գարնանը և Մայրության ու գեղեցկության տոնին: Ներկա էր նաև գյուղի հասարակությունը: Ծրագիրը շատ հազեցած էր. արտասանություն, երգ, պար, փոքրիկ բեմականացումներ, մրցույթ, արցախյան խոհանոց: Աշակերտները երկու թիմ կազմած՝ «Քիրս» և «Մռավ», ցուցադրեցին ազգային խոհանոցի հարստությունը՝ ներկայացնելով իրենց կարողություններն ու հմտությունները նույնարարությունից՝ սեղանի սպասքաղորում, տրված մթերքներով ուսեստների պատրաստում և այլն: Աշխատանքները գնահատում էր ժյուրին, որի անդամները գյուղի հասարակության ներկայացուցիչներն էին: Իսկ ազգային տարազով աղջիկները պատրաստած դարաբարդյան ուսեստներով հյուրասիրեցին ներկաներին:

Բարձր գնահատելով միջոցառումը՝ ԼՂԳ ԿԳ վարչության պետ Ռայա Մուսայելյանն ասաց, որ հաճելի էր ականատես լինել փոքրիկ կոլեկտիվի ուժերով կազմակերպված մնամեծ աշխատանքի: Եվ շնորհակալություն հայտնելով աշակերտական, ուսուցչական կոլեկտիվներին և ակունքի ու համայնքի ղեկավարությանը նման աշխատանք կատարելու համար՝ նա միևնույն ժամանակ ասաց. «Դուք չնտածեք, թե քաղաքի դպրոցներում շատ ավելի լավ միջոցառումներ են կազմակերպվում, որոնց դուք ականատես չեք լինում կամ չեք կարող կազմակերպել մնամեծ միջոցառումներ»:

Կրթության շրջանային բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ասրյանի խոսքով, շրջվարչակազմի խորհրդի նիստում վերջերս քննարկվել էր Ծաղկաշատի դպրոցում արտադպրոցական միջոցառումների դրվածքը, և այնքան մեծ էր ցանկը, որ հաճելիորեն զարմացրել էր բոլորին:

Մասնակիցները հեռացան բարձր տրամադրությամբ՝ համոզվելով, որ փոքրիկ գյուղում էլ կյանքը կարելի է հետաքրքիր դարձնել նաև այդպիսի միջոցառումներով և ակնկալեցին, որ այն վարակիչ կլինի նաև մյուս համայնքների համար:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԱՊԱԳԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐՆ ԷԻՆ

Վերջերս Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի 9-ամյա դպրոցում տոնական միջոցառում և փոքրիկ վիկտորինա-խաղ էին կազմակերպել դպրոցի նախկին աշակերտուհիներ՝ ԱրՊԳ օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արաբայա Ավալերոյանը և հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ

կուրսի ուսանողուհի Կարինե Ղազարյանը, ովքեր իրենց մեկամյա ակտիվ փորձուսուցումն էին անցկացրել հարազատ կրթօջախում:

Միջոցառման մեկնարկը տրվեց 3-րդ դասարանի սաների կողմից: Երեխաներն իրենց արտասանությամբ, երգի ու պարի միջոցով շնորհավորեցին մայրերին և գեղեցիկ սեռի բոլոր ներկայացուցիչներին, իսկ փոքրիկ ներկա-

յացումը ցերեկույթի ամենախոնարհությամբ մարդ կազմեց: Միջոցառման 2-րդ մասում հանդես եկան դպրոցի բարձր դասարանի աշակերտները՝ նախ հայոց լեզվի մասին թևավոր խոսքերով ու հայտնի մտքերով, ապա «Մանուշակ» և «Վարդ» թիմերն իրենց ուժերը փորձեցին հայոց լեզվի գիտելիքներից: Մրցույթն ավարտվեց հօգուտ «Մանուշակ» թիմի: Շնորհավորանքի խոսք ասացին նաև դպ-

րոցի տնօրեն Ս. Սահակյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի Ս. Աբայանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի է. Առստամյանը:

Փորձուսուցման մեկնարկն ավարտված է, ապագա մանկավարժների տպավորությունները մեծ էին, սպասելիքներն՝ արդարացված:

ՍՆՈՋ ՇԱՔԱՐՅԱՆ
ԱրՊԳ ԼՂ. 4-րդ կուրս

ՄԵԹՈՂԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՈՐ ՊԱՆԱՆՋՆԵՐԸ ԲԱՌԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ (ՄԱՅՐԵՆԻ ԿԱՄ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ)

Դպրոց մտած 5,5-6 տարեկան երեխաների ուսումնական գործունեության ոչ ճիշտ կազմակերպումը հաճախ հանգեցնում է վարքային տարաբնույթ ռեակցիաների. քնի եւ ախորժակի խանգարում, նյարդային գրգռվածություն, լացկանություն, հոգնածություն, ագրեսիվություն, աշխատունակության անկում եւ այլն: Այս փաստանշիշերին հետագայում միանում են տարաբնույթ մանկական հիվանդություններ, որոնք ի վերջո հանգեցնում են ֆիզիկական աճի եւ մտավոր զարգացման հապաղման:

Կարթային եւ առողջական կտրուկ փոփոխություններից խուսափելու համար փորձում են դասի կազմակերպման ձեւն ու բովանդակությունը համապատասխանեցնել կրտսեր դպրոցական վաղ տարիքի երեխաների առանձնահատկություններին, տանը եւ դպրոցում ստեղծել համապատասխան պայմաններ:

Չենց այդ տարիքում է, որ ծայրահեղ մտավոր ծանրաբեռնվածությունը չափազանց վտանգավոր է եւ կարող է բացասաբար անդրադառնալ ինչպես երեխայի առողջության, այնպես էլ նյարդային համակարգի վրա: Փոստելիքների չափավորությունն ու ուսուցման աշակերտակենտրոն մեթոդների՝ աշակերտների տարիքին համապատասխանությունը կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության, երեխաների առողջության պահպանման գրավականն են: Այս դժվարությունների հաղթահարման նպատակով 5-6 տարեկան երեխաների ճանաչողական գործունեության նոր բնագավառի՝ դասի կարելու առանձնահատկություններից մեկն այն է, որ ավանդական դասի 45 րոպե տեւողությունը փոխվում է՝ դառնալով 30 րոպե, եւ ուսումնական գործընթացի մնացած 15 րոպեում են իմ աշակերտների հետ իրականացնում եմ զանազան դիպլոմատիկ եւ շարժական խաղեր. երեխաները երգում, պարում են, կատարում բնության դիտումներ: Այս ամենը ոչ միայն հնարավորություն է ստեղծում դասի ցանկացած րոպեին բարձրացնել երեխաների ընկալունակությունը, ակտիվացնել նրանց ուշադրությունն ու հետաքրքրասիրությունը, կանխել հոգնածությունը, այլեւ ողջ ուսումնական գործընթացը դարձնում է անձնակողմնորոշված. երեխաները զբաղվում են ինքնուրույն ուսումնական ստեղծագործական-որոնողական գործունեությամբ՝ դառնալով դասի ակտիվ մասնակից, գիտելիքներ եւ կարողություններ ձեռք բերելու գործընթացի կենտրոնը, իսկ ուսուցիչը դառնում է նրանց գործընկերը, օգնականը, ուղեկիցը:

Այս դեպքում այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք ուսումնական գործընթացում 5-6 տարեկանները ձեռք են բերում, դառնում են համակարգված եւ հաջողությամբ յուրացվող գիտելիքների եւ կարողությունների համալիր. երեխաները կարող են հաղթահարել միայն համակարգված եւ հաջողությամբ աճող դժվարությունները:

2006թ. սեպտեմբերի 1-ից հանրակրթական դպրոց դարձավ տասներկուամյա: Այս կարելու փոփոխության անցումը հանրակրթության առջեւ դրեց լուրջ խնդիրներ. ճշտել ուսուցման բովանդակությունը (թե ինչ պետք է սովորեցնել), որոշել գիտելիքների եւ հմտությունների սահմանները քառամյա ուսուցման 1-ին դասարանում, ուսումնական պլանները, ծրագրերը, ստեղծել մեթոդական համալիրներ, մշակել դասագրքեր:

Եվ եւ ստանձնելով 5,5-6 տարեկանների հետ մանկավարժական հերթական գործունեություն, հասկացա, որ շատ լուրջ պատասխանատվություն եմ վերցրել ուսերիս: Առաջին քայլը, որ խորհուրդ տվեցին ինձ ԿԳ նախարարության մասնագետներն ու քաղաքային մեթոդիկական նախագահը, տեսական հարուստ գրականության ուսումնասիրությունն էր: Մանրամասն ծանոթանալով կրթական առարկայական չա-

փորոշիչների դրույթներին, աշակերտակենտրոն, զարգացնող ուսուցման առանձնահատկություններին, ավելի պարզորոշ էին դառնում հետագա իմ աշխատանքների ժամանակ ցուցաբերվելիք մանկավարժական հմտությունների ու վարպետության գործոնները:

Կրտսեր դպրոցում տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ են դնում ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների առջեւ: Այդ պահանջներին համապատասխան ուսուցման մեթոդների փոփոխություններն անխուսափելիորեն առաջադրում են բազմաթիվ պահանջներ նաեւ ուսուցիչների պարտականություններին նկատմամբ:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ եմ հանդիպել ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությանը: Չատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի եւ երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը եւ մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային, բարոյական, կամային որակները, ինչպես՝ զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը եւ այլն: Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարելի է հանդիպել այսպիսի բնորոշումների. որոշում կայացնող, ուսուցման աջակցող (ֆասիլիտատոր), ուսուցման գործընթացին հետևող, ուսուցման ընթացքը գնահատող, անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաեւ այլ տեսանկյունից՝ արդարացի եւ անաչառ լինելը, պահանջկոտությունը, հունորի զգացումը, մանկավարժական տակտը:

Ուսուցման նոր մեթոդներ եւ հնարներ կիրառելու անհրաժեշտությունից ելնելով, փորձել եմ ինքս ինձ համար՝ որպես ուսուցիչ, վերափոխման ուղիներ որոնել, ինչպիսիք են՝ մեկուսացումից դեպի մասնագիտական միջավայր, ուսուցչակենտրոն դասավանդումից դեպի աշակերտակենտրոն դասավանդում, մեխանիկական աշխատանքից դեպի փորձի միջոցով ուսումնառություն, մեխանիկական վերահսկումից դեպի պատասխանատվության կիսում, կառավարվող աշխատակիցից դեպի ղեկավարողի, առաջնորդողի կարգավիճակ, աշխատանքի պասիվ կատարումից դեպի աշխատանքի կառավարում, դասարանական հոգսերից դեպի համադպրոցական խնդիրներ, փորձածավալ միակողմանի գիտելիքներից դեպի մեծածավալ բազմակողմանի գիտելիքներ:

Վերը նշվածից ելնելով, որն էլ հենց զարգացնող ուսուցման դրույթներից է, գրաճանաչության դասը պլանավորել եմ այնպես, որ օգնեմ աշակերտին ինքնուրույնաբար ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ եւ կարողություններ, սովորել սովորեցնել, որպեսզի ուսուցման ընթացքում գլխավոր ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա, ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն: Աշակերտները գիտելիքները ստանան ոչ թե պատրաստի ձևով, այլ ինքնուրույնաբար, որոնողական հետազոտական կամ համագործակցային աշխատանքների միջոցով, որոնք աշակերտի մեջ հետաքրքրություն են առաջացնում, ուսման նկատմամբ ձևավորում դրական վերաբերմունք, նպատակով դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Փորձեմ ներկայացնել տեսական այն գիտելիքների հենքը, որն ինձ հնարավորություն է ընձեռել ավելի զարգացնել իմ աշխատանքների մակարդակը:

Նախ՝ նոր դպրոց ընդունված 6 տարեկան աշակերտներին ծանոթացրել եմ նրանց համար նոր՝ ուսումնական գործու-

նեության հետ՝ ծանոթություն աշակերտների հետ, դպրոցական կյանքին եւ կարգուկանոնին, աշակերտների իրավունքներին եւ պարտականություններին, ճիշտ մատելու, ձեռք բարձրացնելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու եւ այլ կանոնների:

Իսկ ուսումնական խնդիրների իրականացման համար փորձել եմ բացահայտել ուսումնական գործունեության ընթացքում աշակերտների պատրաստակամության մակարդակը կարգալու, գրելու, հնչյունային վերլուծական, բանավոր կապակցված խոսքի, խոսքի շարահյուսական կառույցի կարողությունների հարցում:

Նախաայբբենական փուլի ավարտին դասարանի աշակերտների գրեթե մեծամասնությունը գաղափար ուներ պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի եւ խոսքում այդ եզրույթների օգտագործման մասին, պարզագույն սիմվոլիկ զննականություն (զծապատկեր) էին օգտագործում նախադասության, բառի, վանկի վերլուծության եւ կառուցման համար, իմ կողմից ընթերցվող հեքիաթները, պատմվածքներն ու բանաստեղծություններն ունկնդրում էին եւ հարցերի օգնությամբ վերարտադրում, կարդացած նյութի շրջանակներում, ակտիվ դատողություններ եւ քննարկումներ էին կատարում իրենց մատչելի եւ հետաքրքիր թեմաներով, բառեր էին խմբավորում ըստ ընդհանրացնող անունների, առանձնացնում բառը նախադասությունից, խոսքից նախադասությունից էին անջատում, նախադասություններ կազմում, նախադասությունից բառն էին անջատում, բառը բաժանում վանկերի, հնչյուններն էին առանձնացնում, բառի հնչյունային կազմը որոշում, գիտեին մեծատառի գործածության առանձնահատկությունները:

Գրաճանաչության հիմնական փուլի վերջում աշակերտները հստակ եւ ճիշտ արտաբերում էին հայերենի բոլոր հնչյունները, որոշում բառի հնչյունային կազմը, բառի մեջ հնչյունների հաջորդականությունը, ամբողջական բառերով կարդում էին մատչելի, իրենց տարիքին համապատասխան փոքրիկ բնագրեր, կարդալիս պահպանում էին հայերենի գրական շեշտը, առոգանությունն ու տրամաբանական դադարները, հասկանում էին կարդացածը, պատասխանում բնագրի վերաբերյալ հարցերին, վերարտադրում կարդացածի բովանդակությունը, կատարում պարզ համեմատություններ, դատողություններ, եզրակացություններ, հայերենի վայելչագրության կանոններին համապատասխան հնչյունատառային վերլուծությունից հետո գրում էին բառեր, բառակապակցություններ, նախադասություններ (3-4 բառից կազմված), արտագրում կամ թելադրությամբ գրում էին գրության եւ արտասանության մեջ տարբերություն չունեցող բառեր, ստուգում եւ գտնում սխալները, ուշադրությամբ լսում էին ուսուցչի եւ ընկերների խոսքը, վերլուծաբար ընկալում լսածը, վերարտադրում նույնությամբ կամ ստեղծագործաբար, արտասանում էին այբբենական շրջանում սովորած բանաստեղծությունները, հանելուկները, շուտասելուկները, սուտասելուկները, պատմում նկարի, էքսկուրսիայի, այն միջոցառումների մասին, որոնց մասնակցել են, հստակորեն զգում էին նախադասությունների սկիզբն ու ավարտը, հաշվում բառերի քանակը նախադասության մեջ, ճանաչում էին կետադրական նշանները:

Այս տարվա տեսչական ստուգումների արդյունքում իմ դասարանում մայրենից եւ մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքները կազմել են համապատասխանաբար՝ 100 տոկոս ընդհանուր եւ 72 տոկոս որակական առաջադիմություն:

Գոհար ԱՐԱՎԱՆՍՆ
Սպեց. հ. 5 հիմն.
Դպրոցի 2-րդ «բ»
դասարանի դասվար

Շնորհավորանք

ԲԱՐԻ ՈՒ ԱՆԱՉԱՌ

Լարիսա Գևորգյան՝ վաստակաշատ, բարի, ազնիվ, բարոյականության լավագույն հատկանիշներով օժտված մանկավարժ եւ պարզապես ընտանիքի մայր ու երջանիկ կին:



Ապրիլի 7-ին լրացավ մեր գործընկերոջ ծննդյան 60-ամյակը: 1974-ից մինչ այսօր իրեն անմնացորդ նվիրել է սերունդների դաստիարակության ու կրթության սրբազան գործին: Լինելով չափազանց բարի ու անաչառ՝ նա սիրված է թե՛ ուսուցիչների եւ թե՛ աշակերտների կողմից: Նա աշխարհ է եկել զուտ մանկավարժ դառնալու համար:

Ծնվել է 1952թ. ապրիլի 7-ին, Ստեփանակերտում: 1969-70 ուստարում ավարտել է բաղաբի հ. 1 միջնակարգ դպրոցը: 1970-ին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Գերազանց գնահատականներով ավարտելով բուհը՝ 1974թ. աշխատանքի է անցել Ասկերանի շրջանի Սզնեթի 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: 1975-ից աշխատում է Սարուշենի միջնակարգ դպրոցում՝ նույն մասնագիտությամբ:

Կենսագրությունը պարզ է ու անպաճույճ, կյանքը՝ լի անմնացորդ նվիրումով: Մենք անչափ ուրախ ենք, որ մեր կողքին ունենք մանկ անձնավորություն եւ մանկավարժ: Սարուշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է Ձեզ, ցանկանում քաջառողջություն, երկար տարիների անհոգ կյանք: Ձեր լուսաբացը միշտ սկսվի բարի խոսքերով, ժպիտներով, իսկ կյանքը՝ լի քաղցր հիշողություններով:

Սարուշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՏՆՕՐԵՆԸ՝ ՄԵՐ ՄՏԵՐԻՄ ԲԱՐԵՎԱՍՈՒ



Կյանքի 50-րդ գարունն է ապրում Իվանյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Գուրգեն Ղուլյանը՝ նվիրյալ մանկավարժը, հավատարիմ ընկերը, մեծատառով մարդը:

Ասում են՝ բարությունը կիրկի աշխարհը, եւ բարության վրա է հենված հզոր երկրագունդը: Այդ բարության հենասյունների մի մասնիկն է Գ. Ղուլյանը: Ծնվել է 1962թ. մարտի 29-ին, նախկին Թուրքմենական ՍՍՀ Նեբիթ-Դաղ քաղաքում, բանվորի ընտանիքում: 1969թ. ընդունվել է ավարտել է Ասկերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանը: Նույն թվին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: 1983թ. ավարտել է ինստիտուտը՝ ստանալով մաթեմատիկայի ուսուցչի մասնագիտություն:

1983-ից մինչև 1992 թվականն աշխատել է դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1992-1998թ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում: Զորացրվել է 1998թ. մայիսին՝ ավագ լեյտենանտի կոչումով: 1998-2000թթ. աշխատել է Խնձրիստանի, հաջեհի միջնակարգ եւ Գլխիսի հիմնական դպրոցներում: 2000-2009թթ. աշխատել է Գլխիսի հիմնական դպրոցում՝ որպես տնօրեն: 2009-2010 ուստարուց Իվանյանի միջնակարգ դպրոցի տնօրենն է:

Կարճ ժամանակում մտերմացանք: Նա մեզ լսում է՝ հասկանում, օգնում: Նրան վստահում ենք մեր գաղտնիքները, լսում բարի խորհուրդները: Երջանկություն է աշխատել մանկ մի անձնավորության հետ, ով կարեկցում է կողքին, աջակցում, դժվար պահերին՝ օգնության ձեռք մեկնում: Ընկեր Ղուլյանի վաստակն արդար է, խիղճը՝ մաքուր ու հանգիստ:

Միրելի՝ գործընկեր, ապրիլի երկար ու երջանիկ: Դու արժանի ես ընթերցանելու երջանկության պտուղները: Տա՝ Աստված, որ միշտ ծաղկով, կարմիր-կանաչով զան գարունները, արշալույսով, ծիածանով պատվեն քո կյանքի օրերը: Ձեռք ձեռքի տված, ուս ուսի՝ միասին շենացնենք վերահայացած մեր ուստանը՝ Իվանյանը:

Շնորհավոր հոբելյանը, մեր հարգարժան գործընկեր:

Ասկերանի շրջանի Իվանյանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԳՈՐԾ

ՇԱՅ ԵՆՔ ԵՆՔ

Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար բազմությունների տակ նվաճված, բայց և այնպես, մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի:

Սովետստերներ

Չայ ենք մենք: Այս պարզ նախադասությունն է առաջինը սովորում մեր սերունդը: Այդ նախադասության մեջ ասված է այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի դարձրել շարունակ պահպանվի բիբլիական մի ողջ ժողովուրդ: Այս ոգով էլ ենք դաստիարակվում են մեր ներկա և գալիք սերունդները: Իսկ այսպիսի ճիշտ դաստիարակություն տրվում է մեր ազգային դպրոցներում: Դպրոցն այն կրթության է, որտեղ մեր պատանի հայրենիքը լինում են համապատասխան հացի նման անհրաժեշտություն հայի համար: Այս գաղափարախոսությամբ դաստիարակություն պատմության, հայ գրականության դասերից բացի դպրոցական

որին հաջորդում են ճաշակով ու վարպետությամբ ընտրված երգերն ու պարերը, որոնց կատարման մեջ կար հայի հպարտություն ու անբաբայություն, բայց զուսպ հրճվանք: Յնչեցին «Չայաստան աշխարհ», «Երեբունի», «Թաման աշխարհ», Շառլ Ազնավուրի «Չավերժական սեր» (Ֆրանսերեն) երգերը, պարեցին «Կուրնկ Չայաստանի», «Սատուցիների պարը», «Չայ ենք մենք», «Իմ անունը Չայաստան է» ազգային պարերը, որոնց կատարումը չէր կարելի տարբերել նույնիսկ վարպետ կատարումներից: Եվ դա բոլորովին զարմանալի չէ, որովհետև հ 11 դպրոցում գործում են այնպիսի խմբակներ, որոնք իրոք զարգացնում են երեխայի բնատուր կարողությունները: Եվ պարավետի, երգի, ասմունքի խմբակները տվեցին իրենց աշխատանքի պտուղները: Իրենց ներդրումն ունեն նաև նկարչության և երգի ուսուցիչները: Միջոցառումը հենց ցույց տվեց նման խմբակների գոյության անհրաժեշտությունը և նրանց նպատակային գործունեությունը:

Այդ խմբակների շնորհիվ էլ միջոցառումները դառնում են կատարյալ ու բովանդակալից:

Չ. 11 դպրոցի «Չայ ենք մենք» միջոցառումն ապացուցեց, որ մեր երեխաները՝ այսօրվա և վաղվա սերունդը, պարզապես իրավունք չունեն չհպարտանալու, որ հայ են: Այնպիսի ոգևորությամբ ու հպարտությամբ էին հնչում մեր մեծ վարպետների խոսքերը, երգվում հայրենասիրական ու զուտ հայկական երգն ու կատարվում պարերը, որ ինչպես միջոցառմանը հրավիրված Պաշտպանության բանակի իրենամային բրիգադի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Դավիթ Դավթյանն արտահայտվեց, ոչ միայն զինվորական ծեռքերում մեր ու բանակի վերաբերող միջոցառումներով կարելի է հպարտանալ, այլև նմանօրինակ միջոցառումներով և նման աշակերտներով, ովքեր իրենց խոսքով, հոգով ու մարմնով կարողացան զինվորների ու սպաներին ստիպել հուզվել, հպարտություն և ոգևորություն ապրել:

Իսկ ԼԳԳ ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանն այնքան տպավորված էր, որ հուզմունքից ու ոգևորությունից ճառագում էր դեմքը և հպարտությամբ փաստեց, որ նման սերնդի առկայությունը հիմք է տալիս համոզված ասելու, որ մեր գործը շարունակող սերունդն արժանի է հաղթանակած երկրի ժառանգորդը համարվելու: Մեր այսպիսի սերունդը վաղվա մեր զինվորը լինելով՝ քաջ գիտակցում է, թե ինչի համար է կրելու ինքն իր գեները: Նախարարը, շնորհակալություն հայտնելով դպրոցականներին, դպրոցի տնօրենին ու միջոցառումը կազմակերպողներին, հպարտությամբ ասաց.

- Ահա՛ մեր դպրոցը...

Չրավիրված էին մայրաքաղաքի բոլոր կրթօջախների փոխտնօրենները, քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, բաժնի մասնագետներ և սովյալ դպրոցի ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվներ:

Վերջում աշակերտներից մեկը հպարտությամբ եզրափակեց:

- Այն հայ աշակերտն են ես, որին այսօր հասել են Մաշտոցի ստեղծած տառերը և ազգային մշակույթի հարուստ գանձարանը, որի հայ մնացած է կախված Չայաստանի և հայ ժողովրդի լինել-չլինելը: Նա քաջ գիտակցում է, որ ինքն է այս ամենի ժառանգորդն ու շարունակողը:

Եվ նորից ձայնը հարցնում է.

- Բայց ո՞վ էս դու վերջապես, ճամփորդ...

- Չայաստանն են ես, հայ ժողովուրդն են ես, հավերժի ճամփորդն են ես, որ դարձրի խորքից եկած դեպի դարերն է գնում և որի երթը վերջ ու վախճան չունի, քանի զեթ մի հայ է ապրում այս հողագնդում՝ այս հավերժական արևի ներքո...

Բոլոր մասնակիցները բարձրանալով բեմ խորխոր երգում են «Չայ քայլերգ»-ը:

Լուսուրա ԳԵՏՐՈՍՅԱՆ



Չուզախու մտքերի ծփանքից անհանգստացած փոխանցի փոխուստ ուսերին տանում այդ հսկայական բեռը... Այսօր գտել են հարցիս պատասխանը. իմ Անահիտն ուզում էր ի վերուստ շնորհված կարճատե, բայց իմաստալից կյանքում սերունդներին փոխանցել հայոց լեզվի անկրկնելի գանձերը, իր հոգատարությունը, բարոյությունը, ընկերասիրությունը, սիրելու և սիրվելու մեծ կարողությունը: Գերագանց մայր էր, հոգատար գավակ, հմուտ կազմակերպիչ, անփոխարինելի ընկերուհի, մեծատառով Մարդ: Բոլոր միջոցառումների զարդն էր Անահիտը, իր հոգեթով ձայնով բացում էր բոլոր փակ դռները, ստիպում ազատություն տալ հոգում կուտակված հույզերին, կարոտին ու թախծին: Երբ նա երգում էր, թվում էր՝ լույս է ճառագում նրանից ու տարածվում շուրջբոլորը:

Չինա դու մեզ համար դարձել ես լուսավոր երագ: Չավատում են, որ քո լուսավոր հոգին ապրում է մեզ հետ: Չավատում են, որ դու մեզ հետ ուրախանում ու պարում էիր բալիկների հարսանիքին և նրանց ականջին շշուշում քո մայրական վերջին խորհուրդներն ու բարեմաղթանքները, վայելում էիր թոռնիկ ունենալու բերկրանքը, լսում նրանց մանկական առաջին թոթովանքները, հեռվից հեռու հետևում անվստահ կատարած նրանց առաջին քայլերին: Ես գիտեմ, որ հաճախ հեքիաթի բարի փերու կերպարանքով այցի ես գալիս նրանց երազներում և առնում քո կարոտը:

Թանկագին Անահիտ, քո թողած ձեռագիրը քո դաստիարակած սերունդներն են, քո խելացի գավակները, համոզված եղիր, որ նրանք բարձր են պահում քո անունն ու բարի հիշատակը:

Դու ապրում ես մեր անճանալիական հուշերում: Շնորհավոր 50-ամյա հոբելյանդ, անմոռանալի ու թանկագին Անահիտ: Կարոտում ենք...

Չասմիկ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Չիզմաթ դպրոցի
պատմության ուսուցչուհի



ները ստանում են արտադասարանական և արտադպրոցական այնպիսի միջոցառումներին, որոնք կոչված են հատկապես հայրենասիրություն, ազգապահպանություն, քրիստոնեական դաստիարակություն սերմանելու:

Նման գաղափարախոսությամբ ու ազգային ոգով առնված դպրոցական մի միջոցառում ներկայացրին մայրաքաղաքի Վ. Չհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի աշակերտները (կազմակերպիչ՝ Ծ. Գրիգորյան):

Միջոցառումը համաքաղաքային էր: Այն ներծծված էր հայրենասիրությամբ, ազգային հպարտությամբ, իսկ մասնակից աշակերտներն այնպիսի ոգեշնչմամբ ու զեղեցիկ հայերենով էին արտաբերում նյութը, որ հուզմունքը կարկամել էր բոլորին:

Երբեմն խոսվում է ավագ դպրոցների ոչ անհրաժեշտության, նրանց գոյության աննպատակայնության մասին: Սակայն դիտելով միջոցառումը, համոզվում ես, որ ավագ դպրոցում դպրոցական ինքնահաստատվում է և հիմնական դպրոցում ստացած գիտելիքները սինթեզում՝ որոշելու, թե ինչ ուղղությամբ պետք է զարգանա հետագայում:

Միջոցառման թեմատիկան ուրույն բովանդակություն ու իմաստ էր պարունակում: Այն զուտ հայկական ու ազգային էր: Կուլիսների հետևից առնական ձայնը հարցնում է. «Ո՞վ է ես դու, ճամփորդ», իսկ ճամփորդը պատասխանում է.

- Ես նա եմ, ով գալիս է դարերի խորքից, պատերազմներից ու ասպատակություններից ավերված ճամփաներով, հերոսական պատմության դրվագներով լի քառուղիներով, խաղաղ ու ստեղծագործ կյանքի ուղիով:

- Ես ինքը կյանքն են, հարատևումը, անմահությունը...

- Իսկ ո՞րն է քո երկիրը, ճամփորդ...

Ճամփորդը զարմացած նայելով շուրջը, որոնող հայացքով մտածում է, թե ով է հարցնողը և հասկանում, որ դարերն են հարցնում ու պատասխանում է.

- Իմ երկիրն այն է, որ գտնվել է բիբլիական Արարատ լեռան ստորոտում, առասպելական դրախտավայրում, որտեղ մեծ ջրհեղեղից հետո ձոնվել է աշխարհաստեղծման առասպելագրույցը, որտեղ խաղողի առաջին որթն է տնկվել, առաջին գինին սարքվել ու վայելվել:

Ու հայոց հրաշավառ գործերի բառերը արտաբերվելով դպրոցականների շուրթերով, դառնում են աղոթք, շարական ասես,

ԼՈՒՍԱՎՈՐ ՇՈՒԿ...

Չուզախու մտքերի ծփանքից անհանգստացած փոխանցի փոխուստ ուսերին տանում այդ հսկայական բեռը... Այսօր գտել են հարցիս պատասխանը. իմ Անահիտն ուզում էր ի վերուստ շնորհված կարճատե, բայց իմաստալից կյանքում սերունդներին փոխանցել հայոց լեզվի անկրկնելի գանձերը, իր հոգատարությունը, բարոյությունը, ընկերասիրությունը, սիրելու և սիրվելու մեծ կարողությունը: Գերագանց մայր էր, հոգատար գավակ, հմուտ կազմակերպիչ, անփոխարինելի ընկերուհի, մեծատառով Մարդ: Բոլոր միջոցառումների զարդն էր Անահիտը, իր հոգեթով ձայնով բացում էր բոլոր փակ դռները, ստիպում ազատություն տալ հոգում կուտակված հույզերին, կարոտին ու թախծին: Երբ նա երգում էր, թվում էր՝ լույս է ճառագում նրանից ու տարածվում շուրջբոլորը:

Չինա դու մեզ համար դարձել ես լուսավոր երագ: Չավատում են, որ քո լուսավոր հոգին ապրում է մեզ հետ: Չավատում են, որ դու մեզ հետ ուրախանում ու պարում էիր բալիկների հարսանիքին և նրանց ականջին շշուշում քո մայրական վերջին խորհուրդներն ու բարեմաղթանքները, վայելում էիր թոռնիկ ունենալու բերկրանքը, լսում նրանց մանկական առաջին թոթովանքները, հեռվից հեռու հետևում անվստահ կատարած նրանց առաջին քայլերին: Ես գիտեմ, որ հաճախ հեքիաթի բարի փերու կերպարանքով այցի ես գալիս նրանց երազներում և առնում քո կարոտը:

Թանկագին Անահիտ, քո թողած ձեռագիրը քո դաստիարակած սերունդներն են, քո խելացի գավակները, համոզված եղիր, որ նրանք բարձր են պահում քո անունն ու բարի հիշատակը:

Դու ապրում ես մեր անճանալիական հուշերում: Շնորհավոր 50-ամյա հոբելյանդ, անմոռանալի ու թանկագին Անահիտ: Կարոտում ենք...

ԲԱՐԻՆ ԳՈՐԾԵՔ, ՈՐ ԲԱՐԻՔ ՍՏԱՆԱՔ

Մի գովիր մարդու տեսքը կամ անթիվ անցավոր գանձերը, այլ գովիր մարդու խելքը, իմաստությունը, համճարը, գործը: Չրիկ



Ամեն խոսք ու խոսող մեծ ու մեծություն չէ: Մեծություն է նա, ում խոսքը գործի է վերածվում, ով բարիք է գործում, բարի, օգտակար գործեր կատարում: Ասում են՝ սեփական ցավերը մեղմելու, մոռանալու մի հատիկ միջոց կա. մտածել այլոց ցավերի մասին, այսինքն՝ սատար կանգնել, հովանի լինել մերձավորներին:

Մեծություն. բառն այս ուժ է ստանում, երբ բարի գործն արվում է հանուն կրթօջախի, ու այն արվում է կրթօջախի երախտապարտ շրջանավարտի հովանավորությամբ, անշուշտ, ավելի քան հպարտության, գնահատված, սիրված լինելու զգացում:

Արժանապատիվ, երախտապարտ շրջանավարտն այդ ԼԳԳ ԱԺ պատգամավոր Արսեն Միքայելյանն է, ով ժամանակին կրթվել ու դաստիարակվել է Չովիաննես Թունանյանի անվան հ. 9 միջնակարգ դպրոցում: Շնորհիվ նրա՝ դպրոցն ունեցավ «Թունանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության» խորագիրը կրող անկյունը:

Դպրոցի տնօրինության, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների անունից շնորհակալություն ենք հայտնում Ա. Միքայելյանին՝ հաճելի նվերի համար, ինչի պակասն, իրոք, զգացվում, նկատվում էր:

Բարեկամներ, միշտ բարին գործեք, որ բարիք ստանաք:

Սյրեփանակերտի Չովի. Թունանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի տնօրինություն

ՕՐԵՆՔ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2012 թվականի փետրվարի 23-ին

«ՀԱՆՐԱՎՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՋՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2009 թվականի դեկտեմբերի 23-ի ՉՕ-2-և օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 14-րդ կետի «, որակավորման տարակարգի բնութագրիչներին» բառերը հանել:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին և 14.2-րդ կետեր:

«14.1) ուսուցչի վերապատրաստում» վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, հնտությունների և ունակությունների յուրացում ու կատարելագործում:

14.2) որակավորման տարակարգ՝ ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ու կարողություններին համապատասխանող որակավորման չափանիշ:»:

Հոդված 2: Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «ունի» բառը փոխարինել «կարող է ունենալ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«Հոդված 26. Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը

1. Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակլավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

2. Տվյալ ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնի նկարագրին ուսուցչի համապատասխանության որոշման նպատակով պետությունն իրականացնում է ուսուցչի հերթական ատեստավորում՝ յուրաքանչյուր ուսուցչի համար հինգ տարին մեկ անգամ: Մինչև սահմանված ժամկետի լրանալը ուսուցիչը կարող է իր նախաձեռնությամբ և իր միջոցներով վերապատրաստվել և դիմել ատեստավորման, բայց ոչ շուտ, քան հերթական ատեստավորումից մեկ տարի հետո:

3. Յուրաքանչյուր տարի ուսումնական հաստատության ուսուցիչների մեկ հինգերորդը ենթակա է ատեստավորման՝ ըստ ուսումնական հաստատության հաստատած ժամանակացույցի:

4. Ուսուցչի ատեստավորումն անցկացվում է պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային ատեստավորման եղանակով (այսուհետ՝ ատեստավորում)՝ ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով) կողմից: Ուսուցչի ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

5. Ուսուցչի ատեստավորման, վերապատրաստման, տարակարգի շնորհման կարգերը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը, իսկ ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող՝ երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

6. Տնօրենը յուրաքանչյուր տարվա համար կազմում է հաստատում է տվյալ տարվա հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և ներկայացնում ատեստավորման հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան:

7. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ոչ ուշ, քան երեք ամիս առաջ տեղեկացվում է փաստաթղթային ատեստավորման

անցկացման ժամկետի մասին:

8. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ուսումնական հաստատության միջոցների հաշվին նախապես պարտադիր անցնում է վերապատրաստում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած վերապատրաստման չափորոշիչներին համապատասխան:

9. Ուսումնական հաստատությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած վերապատրաստող կազմակերպությունների ցանկից ինքնուրույն է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող ուսուցչին, եթե սույն հոդվածի 18-րդ կետով սահմանված ժամկետում ատեստավորման հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել: Ուսուցչի թափուր տեղը համալրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

10. Ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ տնօրենը ատեստավորման հանձնաժողով է ներկայացնում ուսուցչի աշխատանքային բնութագրիչը և սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված՝ ուսուցչի հավաքագրած կրեդիտների մասին տեղեկանք՝ դրանք հիմնավորող փաստաթղթերով: Ուսուցիչը կարող է ներկայացնել նաև տվյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների կողմից տրամադրված այլ գրավոր բնութագրեր: Ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

11. Ուսուցչի աշխատանքային բնութագրիչը ներառում է ուսուցչի կենսագրական տվյալները, նրա գործնական, մարդկային հատկանիշների, մասնագիտական և մանկավարժական գիտելիքների ու կարողությունների, ինչպես նաև ուսուցչի աշխատանքային գործունեության արդյունքների մասին հիմնավորված գնահատականը:

12. Ուսուցչի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները և նվազագույն չափաքանակը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

13. Տնօրենը ատեստավորման ենթակա ուսուցչին ժամնթացում է ատեստավորման հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթի բովանդակությանը, տրամադրում դրանց պատճենը և տեղեկացնում ատեստավորման ընդհանուր ընթացակարգի մասին մինչև ատեստավորման հանձնաժողով ներկայացնելը:

14. Ուսուցչի ատեստավորումն անցկացվում է սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված ցանկին համապատասխան ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

15. Ատեստավորվող ուսուցիչն իրավունք ունի ներկա լինելու իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մասին հարցի քննարկմանը և որոշման կայացմանը:

16. Ատեստավորման հանձնաժողովը յուրաքանչյուր ուսուցչի համար քվեարկության միջոցով ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը:

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին:

2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

17. Ատեստավորման հանձնաժողովն իր ընդունած որոշումը հիմնավորումներով երկօրյա ժամկետում ներկայացնում է համապատասխան ուսումնական հաստատության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնին, որոնք ապահովում են դրա հրապարակումը: Ուսումնական հաստատությունը որոշումն ստանալու օրը դրա մասին տեղեկացնում է տվյալ ուսուցչին:

18. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է հնգօրյա ժամկետում բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնին կամ դատական կարգով: Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը բողոքների քննարկումից հետո ատեստավորման հանձնաժողովին ներկայացնում է առաջարկ տվյալ ուսուցչի զբաղեցրած

պաշտոնին համապատասխանության հարցը կրկնակի վերանայելու կամ որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ: Բողոքարկումների ընթացակարգը սահմանվում է համապատասխան կարգով:

19. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը հիմք է ուսուցչի պաշտոնավարության կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու համար:

20. Սույն հոդվածի 16-րդ մասի 2-րդ կետի հիման վրա ուսումնական հաստատության տնօրենը որոշումը ստանալուց հաջորդող տասնօրյա ժամկետում պաշտոնից ազատում է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող ուսուցչին, եթե սույն հոդվածի 18-րդ կետով սահմանված ժամկետում ատեստավորման հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել: Ուսուցչի թափուր տեղը համալրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

21. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը բողոքարկելու դեպքում ուսուցչի ազատումը հետաձգվում է մինչև վերջնական որոշման կայացումը:

22. Տվյալ ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում անձը չի զրկվում մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

23. Ուսուցիչը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել ատեստավորման, եթե ինքնուրույն կուտակել է համապատասխան կրեդիտներ, ունի աշխատանքային բնութագիր, երկու տարվա մանկավարժական ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ տվյալ ուսումնական հաստատությունում:

24. Ատեստավորման ենթակա չէ՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ուսուցիչը:

2) ողի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը, եթե նա նման հայտ չի ներկայացրել:

25. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ենթակա է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

26. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

27. Կրթական քաղաքականության փոփոխման դեպքում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կարող է կազմակերպել ուսուցիչների արտահերթ պարտադիր վերապատրաստում պետական բյուջեի կամ այլ միջոցների հաշվին:

28. Ատեստավորված ուսուցիչը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման գործընթացին: Ուսուցչի որակավորման տարակարգը քառաստիճան է և շնորհվում է աստիճանակարգության սկզբունքով:

29. Որակավորման տարակարգի շնորհման և դրա բարձրացման համար ուսուցիչը կարող է դիմել հետևյալ համաշափությանը:

1) երկրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ առաջին աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երկու տարի հետո:

2) երրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ երկրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երեք տարի հետո:

3) չորրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար՝ երրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն չորս տարի հետո:

30. Ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման մասին որոշումն ընդունվում է պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով,

ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանրապետական հանձնաժողով) կողմից: Հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

31. Ուսուցչի որակավորման տարակարգերի բնութագրիչները սահմանում է կրթության պետական կառավարման մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքի ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարզատարումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն):

32. Ուսուցչի գիտելիքների գնահատման անհրաժեշտությունն առաջանալու դեպքում տվյալ ուսուցիչը կարող է իր նախաձեռնությամբ անցնել գիտելիքների գնահատում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունում:

33. Հանրապետական հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը:

1) ենթակա է համապատասխան որակավորման տարակարգի շնորհման:

2) ենթակա չէ համապատասխան որակավորման տարակարգի շնորհման:

34. Հանրապետական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնին կամ դատական կարգով:

35. Հանրապետական հանձնաժողովի որոշումը հիմք է կրթության պետական կառավարման մարմնի կողմից ուսուցչին որակավորման համապատասխան տարակարգ շնորհելու և հավելավճար սահմանելու համար:

36. Որակավորման տարակարգ ստացած ուսուցչին տրվում է համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

37. Բողոքի առկայության դեպքում ուսուցչին տարակարգ շնորհելը հետաձգվում է մինչև վերջնական որոշման կայացումը:

38. Որակավորման տարակարգ տրվում է հինգ տարի ժամկետով, որի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է, եթե տվյալ ուսուցիչը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:

39. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի որակավորման տարակարգը պահպանվում է, եթե վերջինս տվյալ ուսումնական հաստատությունում ատեստավորումից հետո ճանաչվել է զբաղեցրած պաշտոնին համապատասխանող: Որակավորման տարակարգի դիմաց տվյալ ուսուցչի հավելավճարի իրավունքը վերականգնվում է ատեստավորման օրվանից:»:

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«5. Ուսումնական հաստատությունում աշխատող այն ուսուցիչները, որոնք չեն համապատասխանում սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչև 2018 թվականի օգոստոսի 20-ը, եթե մինչև այդ չեն ապահովում ուսուցչին ներկայացվող պահանջները:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱԳ՝ Բ. ՍԱՐԿՎԱՅՆ 17 մարտի 2012թ. ք. Ստեփանակերտ

ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» ապրիլի 2012թ. N 225-Ն ք.Ստեփանակերտ

ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԸՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԸՆՈՐՀՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՅՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՅԱԾ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 920-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 30-րդ, 36-րդ մասերին, 29-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Հաստատել՝ 1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

- 2) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.
- 4) ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելվածար տալու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:
- 2. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը» համաձայն N 2 հավելվածի.

ման, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, ատեստավորման միջոցով որակավորում ստացած հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին հավելվածար տալու կարգերը, Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգերի բնութագրիչները հաստատելու մասին» N 920-Ն որոշման մեջ

կատարել հետևյալ փոփոխությունները՝ 1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին».

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1 Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԸՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն կարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը:
- 2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովը (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով) և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն կարգով, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգերով և այլ իրավական ակտերով:
- 3. Ատեստավորման հանձնաժողովի գործունեության նպատակը հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով ատեստավորում իրականացնելն է:
- 4. Հանրապետական հանձնաժողովի գործունեության նպատակը հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, շնորհման

- գործընթացի իրականացումն է:
- 5. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովները մեկ տարի ժամկետով և հասարակական հիմունքներով գործող մարմիններ են, որոնց անհատական կազմը, ինչպես նաև նախագահը և քարտուղարը հաստատվում են Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) համապատասխան հրամանով:
- 6. Ատեստավորման հանձնաժողովը բաղկացած է 5, հանրապետական հանձնաժողովը՝ 7 անդամից:
- 7. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների ուղղված հայտերի ընդունումը և միջանկյալ աշխատանքները կազմակերպում է համապատասխան լիազոր մարմնի և (կամ) Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարության) աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:
- 8. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների որոշումները ենթակա են բողոքարկման՝ օրենքի 26-րդ հոդվածի 18-րդ և 34-րդ մասերով սահմանված կարգով:
- 9. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների լիազորությունները դարձնելով են նախարարի հրամանով՝ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման ու հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգերով սահմանված գործողությունները կատարելուց հետո:

II. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- 10. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովները ձևավորվում են նախարարի հրամանով՝ տվյալ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի՝ շրջանի վարչակազմի ղեկավարի, Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետի (այսուհետ՝ լիազոր մարմին) առաջարկության հիման վրա:
- 11. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների կազմում կարող են լինել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական խորհուրդների և խորհրդակցական մարմինների ներկայացուցիչները, կրթության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների մանկավարժության մասնագետները, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի և նախարարության աշխատակազմի աշխատողները:
- 12. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների անդամների թեկնածուների ամբողջական անվանացանկը կարող է համալրվել և փոփոխվել առաջադրող մարմինների կամ կազմակերպությունների հիմնավորված առաջարկությամբ, իսկ անհատների դեպքում՝ իրենց դիմումով:
- 13. Մինչև հանձնաժողովների թեկնածուների ցուցակը նախարարություն ներկայացնելը առաջադրող մարմինը կամ կազմակերպությունը տվյալ թեկնածուին գրավոր տեղեկացնում է ատեստավորման կամ հանրապետական հանձնաժողովի անդամության թեկ-

նածուների ցուցակում առաջադրված լինելու մասին:

14. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների անդամների թեկնածուների ցուցակներում պետք է լրացվեն հետևյալ տվյալները՝

- 1) յուրաքանչյուր թեկնածուի անունը, ազգանունը (հայրանունը), աշխատանքի վայրը, պաշտոնը, բնակության վայրը, հեռախոսահամարները (բնակարանային, աշխատանքային, բջջային), էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (առկայության դեպքում).
- 2) որ լիազոր մարմինն է ներկայացնում.
- 3) ներկայացվող համայնքը.
- 4) առարկայական մասնագետի որակավորման աստիճանը, որակավորման տարակարգը (առկայության դեպքում), մանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժը հաստատող տվյալը.
- 5) մանկավարժության ոլորտի մասնագետի գիտական աստիճանը և կոչումը (առկայության դեպքում):

15. Ատեստավորման հանձնաժողովը կազմվում է նախարարի երեք և լիազոր մարմնի երկու, իսկ հանրապետական հանձնաժողովը՝ նախարարի հինգ և լիազոր մարմնի երկու ներկայացուցիչներից:

16. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների կազմում ընտրված անդամները նախարարության աշխատակազմի կողմից պատշաճ կարգով տեղեկացվում են ատեստավորման անցկացնելու օրվա, ժամի և վայրի մասին, ատեստավորող հանձնաժողովի աշխատանքն սկսվելուց ոչ շուտ, քան 36 և ոչ ուշ, քան 24 ժամ առաջ:

ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

17. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների աշխատանքներին որևէ անդամի հետագա մասնակցության անհնարինությունը դեպքում հանձնաժողովի կազմը համալրվում է նախարարի հրամանով՝ սույն կարգի համաձայն:

18. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների աշխատանքներին նախագահի և (կամ) քարտուղարի հետագա մասնակցության անհնարինությունը դեպքում նախարարի համապատասխան հրամանով նշանակվում է նոր նախագահ կամ քարտուղար:

19. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնում են նախարարի հրամանով՝ ձևավորման պահից և դադարեցնում գործունեությունը՝ համաձայն նախարարի հրամանի:

III. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների լիազորությունները սահմանվում են օրենքով, սույն կարգով և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման ու հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգերով և այլ իրավական ակտերով:

IV. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովներն իրենց աշխատանքը կազմակերպում են նիստերի միջոցով:

22. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

23. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների որոշումներն ընդունվում են քվեարկությամբ մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

V. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ

24. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների նախագահը՝

- 1) ղեկավարում է տվյալ հանձնաժողովի աշխատանքները:
- 2) վարում է տվյալ հանձնաժողովի նիստերը:
- 3) որոշում է աշխատանքների հետ կապված հարցերի, դիմումների քննարկման հերթականությունը՝ այն համաձայնեցնելով տվյալ հանձնաժողովի անդամների հետ:
- 4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

25. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների քարտուղարը՝

- 1) արձանագրում է տվյալ հանձնաժողովի նիստերը:
- 2) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VII. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄԸ

26. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովների անդամը՝

- 1) կարող է վարել նիստը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:
- 2) ուսումնասիրում է փաստաթղթերի փաթեթը:
- 3) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին:
- 4) մասնակցում է յուրաքանչյուր ուսուցչի համար անցկացվող քվեարկություններին:
- 5) ստորագրում է ատեստավորման կամ տարակարգի շնորհման թերթը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում կցում է կարծիքը և գրառում է «հատուկ կարծիքը կցվում է» բառերը:
- 6) ծանոթանում է նիստերի արձանագրություններին:
- 7) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

27. Ատեստավորման և հանրապետական հանձնաժողովները կարող են դիմել նախարարին հանձնաժողովի անդամին հանձնաժողովից հեռացնելու միջնորդությամբ, եթե այդ անդամը՝

- 1) երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է նիստից:
- 2) երեք անգամ հրաժարվել է մասնակցել քվեարկությանը:

Հավելված 2

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՎՈՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն), անկախ կազմակերպության կազմակերպության (այսուհետ՝ կրթության մարմին) և ենթակայությունից, ուսուցչի ատեստավորման կարգը:

2. Ատեստավորումն ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնին ուսուցչի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային կարողությունների և հմտությունների համապատասխանության որոշման գործընթացն է:

3. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորումն իրականացվում է «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն կարգով և այլ իրավական ակտերով:

II. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

4. Ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորումն անցկացվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ ուսումնական հաստատության տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) հաստատած ժամանակացույցին համապատասխան:

5. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորումն իրականացվում է պարզ ընթացակարգով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից սահմանված՝ ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկով նախատեսված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

6. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, Ստեփանակերտ քաղաքում, նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների համար՝ նախարարությունում փաստաթղթային ատեստավորման եղանակով՝ ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով):

7. Տնօրենը յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով կազմում է տվյալ տարվա ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և մինչև փետրվարի 1-ը ներկայացնում տարածքային կառավարման մարմնի ղեկավարին՝

շրջանի վարչակազմի ղեկավարին, Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետին, նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին (այսուհետ՝ լիազոր մարմին):

8. Ատեստավորման ենթակա ուսուցչին հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենն ատեստավորումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր ծանուցում է փաստաթղթային ատեստավորման, սույն կարգի և անցկացման ժամկետի մասին:

9. Ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը լիազոր մարմին է ներկայացնում ատեստավորման ենթակա ուսուցիչների ատեստավորման համար սահմանված փաստաթղթերի փաթեթը:

10. Լիազոր մարմնի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումն ատեստավորման ենթակա ուսուցիչների փաստաթղթերի փաթեթը կազմում է տրամադրում է ատեստավորման հանձնաժողովի նախագահին:

11. Լիազոր մարմնի աշխատակազմն առնվազն հինգ օր առաջ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի միջոցով ատեստավորման ենթակա ուսուցչին տեղեկացնում է ատեստավորման օրվա, ժամի և վայրի մասին:

12. Ատեստավորման հանձնաժողովը լիազոր մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրության արդյունքում նկատված անորոշությունների կամ վիճահարույց հարցերի առկայության դեպքում ատեստավորվող ուսուցչին հրավիրում է քննարկմանը:

13. Յուրաքանչյուր ուսուցչի վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն անհատական քվեարկության միջոցով, ձայների մեծամասնությամբ, ընդունում է օրենքով սահմանված որոշումներից մեկը:

14. Ատեստավորվող ուսուցիչն իրավունք ունի ներկա գտնվելու իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մասին հարցի քննարկմանը և որոշման ընդունմանը:

III. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

15. Ատեստավորման ավարտից հետո ատեստավորման հանձնաժողովն անփոփոխ է արդյունքները և յուրաքանչյուր

ուսուցչի համար կազմում է ատեստավորման թերթ, որի ձևը սահմանվում է նախարարի հրամանով:

16. Ատեստավորման թերթը ստորագրում են ատեստավորման հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները:

17. Հատուկ կարծիք ներկայացրած ատեստավորման հանձնաժողովի անդամը կցում է հատուկ կարծիքը՝ ստորագրության կողքին գրառելով «հատուկ կարծիքը կցվում է» բառերը:

18. Ատեստավորման հանձնաժողովն իր որոշումը երկօրյա ժամկետում ներկայացնում է համապատասխան ուսումնական հաստատություն, ինչպես նաև կրթության պետական կառավարման լիազոր մարմին, որն ապահովում է դրա հրապարակումը կայքում: Ուսումնական հաստատությունը որոշումն ստանալու օրը դրա մասին տեղեկացնում է տվյալ ուսուցչին:

19. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով՝ նախարարություն, կամ դատական կարգով:

20. Ատեստավորման արդյունքները նախարարություն բողոքարկվելու դեպքում նախարարի հրամանով ձևավորվում է երեք հոգանոց բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովում չեն կարող ներգրավվել տվյալ որոշումն ընդունած ատեստավորման հանձնաժողովի անդամները:

21. Ատեստավորման արդյունքները բողոքարկելու դեպքում ուսուցչի կողմից նախարարություն է ներկայացվում՝

- 1) դիմում՝ նախարարի անունով:
- 2) ատեստավորման հանձնաժողովի որոշման պատճենը:
- 3) տվյալ ուսուցչի ատեստավորմանը ներկայացված փաստաթղթերի փաթեթի պատճենը:

22. Բողոքարկման հանձնաժողովը եռօրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, կազմում համապատասխան եզրակացություն և տվյալ եզրակացությունը ներկայացնում նախարարին:

23. Կրթության կառավարման պետական լիազոր մարմինն ատեստավորման հանձնաժողովին ներկայացնում է առաջարկություն՝ տվյալ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցը կրկնակի վերանայելու կամ որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ:

24. Ատեստավորման հանձնաժողովի կողմից ստացված փաստաթղթերը լիազոր մարմնի աշխատակազմը պահպանում և արխիվացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

Հավելված 3
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի
N 225-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն կարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման կարգը:
2. Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) ուսուցչի որակավորման տարակարգը քառաստիճան է և շնորհվում է աստիճանակարգության սկզբունքով:
3. Ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի (այսուհետ՝ տարակարգ) շնորհումն իրականացվում է «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն կարգով և այլ իրավական ակտերով:

II. ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ

- 4. Ատեստավորված ուսուցիչն իր նախաձեռնությամբ է մասնակցում տարակարգի շնորհմանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին (այսուհետ՝ նախարար) ուղղված իր դիմումի հետ միասին ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) սահմանած անհրաժեշտ փաստաթղթերը:
5. Տարակարգի շնորհման և դրա բարձրացման համար ուսումնական հաստատության ուսուցիչն իրավասու է դիմելու նախարարին՝ հիմնվելով օրենքով սահմանված համաչափությունների վրա:
6. Ուսումնական հաստատության ուսուցչին տարակարգի շնորհման մասին որոշումն ընդունվում է պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, նախարարի հրամանով ձևավորված ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) կողմից՝ հիմք ընդունելով նախարարության կողմից սահմանված տարակարգի բնութագրիչները:
7. Հանրապետական հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքով ընդունում է օրենքի 26-րդ հոդվածի 33-րդ մասով սահմանված որոշումներից մեկը:
8. Հանրապետական հանձնաժողովի որոշումը հիմք է հանդիսանում ուսուցչին համապատասխան տարակարգ շնորհելու մասին նախարարի հրամանի համար:
9. Հանրապետական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել նախարարությանը կամ դատական կարգով:
10. Բողոքի առկայության դեպքում ուսուցչին տարակարգ շնորհելը հետաձգվում է մինչև նախարարի կողմից վերջնական որոշումն ընդունվելը:
11. Հանրապետական հանձնաժողովի որոշումները նախարարություն բողոքարկվելու դեպքում նախարարի հրամանով ձևավորվում է երեք հոգանոց բողոքարկման հանձնաժողով, որի կազմում չեն կարող ներգրավվել տվյալ որոշումն ընդունած ատեստավորման հանձնաժողովի անդամները:
12. Բողոքարկման հանձնաժողովը եռօրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և կազմում համապատասխան եզրակացություն և տվյալ եզրակացությունը ներկայացնում նախարարին:
13. Նախարարը ընդունում է համապատասխան որոշում՝ հիմք ընդունելով բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը:

- 14. Ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տարակարգ ստացած ուսուցչին տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափով հավելավճար:
15. Ուսումնական հաստատության ուսուցչին տարակարգ տրվում է 5 տարի ժամկետով:
16. Տարակարգի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է այն դեպքում, երբ տվյալ ուսուցիչն ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանում:
17. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխված ուսուցչի տարակարգը պահպանվում է այն դեպքում, երբ տվյալ ուսումնական հաստատությունում ատեստավորման արդյունքում ուսուցիչը ճանաչվել է զբաղեցրած պաշտոնին համապատասխանող: Տարակարգի դիմաց տվյալ ուսուցչի հավելավճարի իրավունքը վերականգնվում է ատեստավորման օրվանից:

Հավելված 4
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի
N 225-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՅՈՎ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՋԱԾ ԴԵՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ
ՏԱԼՈՒ

- 1. Սույն կարգով սահմանվում է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած ուսուցչին, ըստ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների, հավելավճար տալու կարգը:
2. Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած ուսուցչին ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տրվում է հավելավճար՝
1) չորրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 50 տոկոսի չափով:
2) երրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 30 տոկոսի չափով:
3) երկրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 20 տոկոսի չափով:
4) առաջին աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 10 տոկոսի չափով:
3. Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած ուսուցչի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:
4. Սույն կարգով սահմանված հավելավճարները տրվում են միայն հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատող ուսուցիչներին:

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի ապրիլի «25»-ի
Պետական գրանցման համարը 1051263
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարինյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«23» ապրիլի 2012թ.

N62-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ, ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹԻ ԶԵՎԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹՎՈՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՃԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԱՍԴԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ և 31-րդ մասերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ հաստատված N2 հավելվածի 15-րդ կետին, N 3 հավելվածի 4-րդ և 6-րդ կետերին համապատասխան՝

ՀՐԱՍԱՅՈՒՄ ԵՄ.

- 1. Սահմանել՝
1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:
2) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման թերթի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները և որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 23-ի
N 62-Ն հրամանի

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 23-ի
N 62 -Ն հրամանի

ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՉԻ
ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱՎԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

- 1. Ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ցանկը ներառում է՝
1) անձնագրի պատճենը.
2) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.
3) աշխատանքային գրքույկի պատճենը.
4) հրատարակված գիտական, մեթոդական հոդվածների ցանկը (առկայության դեպքում).
5) համակարգչային գիտելիքների իմացությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).
6) գիտական, գիմվորական, մարզական աստիճանը կամ կոչումը, պարգևները (առկայության դեպքում).
7) ատեստավորման նպատակով ուսուցչի վերապատրաստման վկայականի պատճենը, այլ վերապատրաստումների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում).
8) տնօրենի կողմից տրված աշխատանքային բնութագիրը (բնութագրի հետ համաձայն չլինելու դեպքում՝ նաև ուսուցչի գրավոր առարկությունը).
9) ուսումնական հաստատության տեսչավորումից հետո տրված՝ տվյալ ուսուցչի մասով եզրակացությունը (առկայության դեպքում).
10) ուսուցչի մասնագիտական գործունեության վերաբերյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների (մանկավարժական, ծնողական խորհուրդներ (առկայության դեպքում), աշակերտական խորհուրդներ (առկայության դեպքում), համապատասխան առարկայական մեթոդական միավորման) կարծիքները.
11) փաստաթղթային փաթեթին կցվում են ատեստավորվող ուսուցչի բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարները:
2. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճեններին հետ համեմատելուց հետո վերադարձվում են:

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 23-ի
N 62-Ն հրամանի

Ձև

ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹ
ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՉԻ

(Նշել ուսումնական հաստատության անվանումը)

- 1. Անուն, հայրանուն, ազգանուն -----
2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը-----
3. Ատեստավորման պահին տվյալ ուսումնական հաստատությունում դասավանդվող առարկան, աշխատանքային ստաժը-----
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի _____-ի N _____ հրամանով հաստատված փաստաթղթերի ցանկի առկայությունը-----
5. Ատեստավորման հանձնաժողովի անդամների ձայներն՝ ըստ ընդունած որոշման՝
1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին-----
2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին-----
6. Ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը-----

Հանձնաժողովի նախագահ՝ -----
Հանձնաժողովի քարտուղար՝ -----
Հանձնաժողովի անդամ՝ -----
Հանձնաժողովի անդամ՝ -----
Հանձնաժողովի անդամ՝ -----

Կ. Տ.

Ատեստավորման անցկացման ամսաթիվ

I. ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՎԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

- 1. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգի բնութագրիչներն են՝
1) առնվազն բակալավրի կրթական աստիճան.
2) վերջին յոթ տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա ուսուցչական աշխատանքի ստաժ.
3) ուսուցչի վարպետության «լավ» մակարդակ.
4) դասավանդող դասարաններում վերջին տարվա ընթացքում «6» թվանշանից բարձր գնահատական ունեցող աշակերտների թվի աճ 10 տոկոսով.
5) վերջին երեք տարվա ընթացքում՝
ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն ճանաչված ամսագրերում կամ «Լուսարար» թերթում առնվազն մեկ գիտական կամ մանկավարժական հոդված, կամ
բ. դասագրքի, կամ
գ. մեթոդական ձեռնարկի, կամ
դ. ուսումնաօժանդակ նյութի, կամ
ե. գիտամանկավարժական աշխատության հեղինակ.
6) վերջին երեք տարվա ընթացքում առնվազն 80 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործում:
2. Սույն հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված բնութագրիչն ուժի մեջ է մտնում 2014 թվականից:
3. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում նախարարի անունով.
2) անձնագրի պատճենը.
3) իր պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման հանձնաժողովի որոշման պատճենը.
4) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.
5) աշխատանքային գրքույկի պատճենը.
6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից հաստատված ձևին համապատասխան դպրոցի տնօրինության կամ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպության կողմից տրված տեղեկանք ուսուցչի վարպետության մակարդակի մասին.
7) արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի դասավանդած դասարանների աշակերտների առաջադիմության մասին.
8) հեղինակային աշխատությունները.
9) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունից տեղեկանք վերջին երեք տարվա ընթացքում առնվազն 80 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործման մասին:

- 4. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճեններին հետ համեմատելուց հետո վերադարձվում են:
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ի 6-րդ կետով ստեղծված հանրապետական հանձնաժողովը կարող է դիմել նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությանը՝ ստուգելու համար սույն հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված տեղեկանքի հավաստիությունը:
II. ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՎԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ
6. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երկրորդ աստիճանի տարակարգի բնութագրիչներն են՝
1) առնվազն մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) աստիճան.
2) վերջին 10 տարվա ընթացքում 7 տարվա ուսուցչական աշխատանքի ստաժ.
3) ուսուցչի վարպետության «զերազանց» մակարդակ.
4) համակարգչային գիտելիքների «լավ» մակարդակ.
5) վերջին երկու տարվա ընթացքում՝

ԱՏԵՏԱՎՈՐՈՒՄ

11 Ե ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն ճանաչված անսագրերում առնվազն երկու գիտական կամ մանկավարժական հոդված, կամ

- բ. դասագրքի, կամ
- գ. մեթոդական ձեռնարկի, կամ
- դ. ուսումնաօժանդակ նյութի, կամ
- ե. գիտամանկավարժական աշխատության հեղինակ.

6) դասավանդվող դասարաններում վերջին տարվա ընթացքում «7» թվանշանից բարձր գնահատական ունեցող աշակերտների թվի աճ 10 տոկոսով.

7) վերջին երկու տարվա ընթացքում առնվազն 60 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործում:

7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երկրորդ աստիճանի տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում նախարարի անունով.
- 2) որակավորման առաջին տարակարգ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը.
- 3) անձնագրի պատճենը.
- 4) իր պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման հանձնաժողովի որոշման պատճենը.

5) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.

- 6) աշխատանքային գրքույկի պատճենը.
- 7) նախարարության կողմից հաստատված ձևին համապատասխան դպրոցի տնօրինության կամ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպության կողմից տրված տեղեկանք ուսուցչի վարպետության մակարդակի մասին.

8) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններից տրված համակարգչային գիտելիքների մասին տեղեկանք.

9) արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի դասավանդած դասարանների աշակերտների առաջադիմության մասին.

- 10) հեղինակային աշխատությունները.
- 11) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունից տեղեկանք՝ վերջին երկու տարվա ընթացքում առնվազն 60 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործման մասին:

8. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձվում են:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 6-րդ կետով ստեղծված հանրապետական հանձնաժողովը կարող է դիմել նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությանը՝ ստուգելու համար սույն հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված տեղեկանքի հավաստիությունը:

III. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՍԹԵՇ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

10. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երրորդ աստիճանի տարակարգի բնութագրիչներն են՝

- 1) վերջին 12 տարվա ընթացքում առնվազն 10 տարվա ուսուցչական աշխատանքի ստաժ.
- 2) վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում առնվազն երկու մասնագիտական թեմայի վարում կամ ուսուցիչների վերապատրաստման առնվազն մեկ հեռավար ուսուցման դասընթացի վարում.
- 3) համակարգչային գիտելիքների «գերազանց» մակարդակ.
- 4) վերջին երեք տարվա ընթացքում՝

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն ճանաչված անսագրերում առնվազն երեք գիտական կամ մանկավարժական հոդված կամ

- բ. դասագրքի, կամ
- գ. մեթոդական ձեռնարկի, կամ
- դ. ուսումնաօժանդակ նյութի, կամ
- ե. գիտամանկավարժական աշխատության հեղինակ.

5) դասավանդվող դասարաններում վերջին տարվա ընթացքում «7» թվանշանից բարձր գնահատական ունեցող աշակերտների թվի աճ 10 տոկոսով.

6) վերջին երեք տարվա ընթացքում առնվազն 90 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործում:

11. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երրորդ աստիճանի տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում նախարարի անունով.
- 2) անձնագրի պատճենը.

3) որակավորման երկրորդ տարակարգ ունենալը հավաստող փաստաթուղթ.

4) իր պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման հանձնաժողովի որոշման պատճենը.

5) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.

6) աշխատանքային գրքույկի պատճենը.

7) տեղեկանք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում առնվազն երկու մասնագիտական թեմայի կամ ուսուցիչների վերապատրաստման առնվազն մեկ հեռավար ուսուցման դասընթացի վարման մասին.

8) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունից տեղեկանք համակարգչային գիտելիքների մասին.

9) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունից տեղեկանք վերջին երեք տարվա ընթացքում առնվազն 90 ժամ առարկայական-մասնագիտական գիտելիքների կատարելագործման մասին.

10) հեղինակային աշխատությունների պատճենը.

11) արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի դասավանդած դասարանների աշակերտների առաջադիմության մասին:

12. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձվում են:

IV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՉՈՐՈՐԴ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՉՈՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՍԹԵՇ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

13. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման չորրորդ աստիճանի տարակարգի բնութագրիչներն են՝

- 1) առնվազն գիտությունների թեկնածու.
- 2) վերջին 16 տարվա ընթացքում 14 տարվա ուսուցչական աշխատանքի ստաժ.
- 3) «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում «Մասնագետի անկյունի» աշխատանքներին մասնակցություն.
- 4) վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում վերապատրաստման առնվազն երկու հեռավար ուսուցման դասընթացի վարում.
- 5) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունում վերապատրաստման դասընթացի վարում.
- 6) համակարգչային գիտելիքների «գերազանց» մակարդակ.
- 7) վերջին չորս տարվա ընթացքում՝

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն ճանաչված անսագրերում առնվազն երեք գիտական կամ մանկավարժական հոդված, կամ

- բ. դասագրքի, կամ
- գ. մեթոդական ձեռնարկի, կամ
- դ. ուսումնաօժանդակ նյութի, կամ
- ե. գիտամանկավարժական աշխատության հեղինակ.

8) դասավանդվող դասարաններում վերջին տարվա ընթացքում «7» թվանշանից բարձր գնահատական ունեցող աշակերտների թվի աճ 10 տոկոսով:

14. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման չորրորդ աստիճանի տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում նախարարի անունով.
- 2) որակավորման երրորդ տարակարգ ունենալը հավաստող փաստաթուղթ.
- 3) անձնագրի պատճենը.
- 4) իր պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման հանձնաժողովի որոշման պատճենը.
- 5) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.

6) աշխատանքային գրքույկի պատճենը.

7) տեղեկանք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում վերապատրաստման առնվազն երկու հեռավար ուսուցման դասընթացի վարման և «Մասնագետի անկյունի» աշխատանքներին մասնակցության մասին.

8) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունից տեղեկանք՝ վերջին տարվա ընթացքում համակարգչային գիտելիքների մասին.

9) նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունում վերապատրաստման դասընթացի վարման մասին.

10) հեղինակային աշխատությունները.

11) արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի դասավանդած դասարանների աշակերտների առաջադիմության մասին:

15. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձվում են:

ԱՆՊՐԱՂԱՐԶ

ԺԱՄԱՆԱԿՆ Ե ԶԱՐԺՎԵԼ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Վերջերս ԼՂՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ Ստեփանակերտում կազմակերպվեցին ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցում էին Ստեփանակերտի և ԼՂՀ տարբեր շրջանների ուսուցիչներ: Այն վարում էին ՀՀ-ից ժամանած մասնագետները: Ինքս ներկա գտնվելով դասընթացներից, լսելով տարբեր մասնագետների՝ պետք է առանձնացնեն մի անուն. Դավիթ Գասպարյան, որ շարունակում է մեր մեծերի ոսկե շրթան: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Հայոց լեզու և գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր, բազմաթիվ գրքերի հեղինակ... Անսպառ է շարքը: Էություն՝ ամբողջությամբ լցված գրականությամբ: Գրականության առաջին հայացքից պարզ ու խաղաղ թվացող, բայց բարդ օվկիանոսում իմ կյանքում չեմ հանդիպել նման հիանալի լողորդի:

Լսարանը կլանված էր նրա բառ ու բանով. ինչպես չկլանվել, չտոգորվել նրա խոսքերով, երբ նա խոսում է ճշգրիտ, փաստերով, գրողին ճանաչում է շատ խորը, բացահայտում նրա էությունն ու ապրած ժամանակաշրջանը:

Գրականության մեջ շատ կան խորհուրդ ճանապարհներ, որոնք մինչև այսօր չեն հարթեցվել: Այդ առիթով գրականագետն ասում է. «Պետք է տալ այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք մինչև օրս մնում են չբացահայտված, այլապես սերունդները մեզ չեն ների»: Գրականագետը հետագա շրջանների գրականության մեջ պարտություններ չի տեսնում:

Մի կարևոր դասընթաց ևս, որ վերաբերում է աշակերտի ֆիզիկական պատրաստվածությանն ու առողջ ապրելակերպին: Դասը վարում էր դոցենտ, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի դասախոս, գիտությունների թեկնածու Արտակ Ստեփանյանը:

Քննարկվեցին բազմաթիվ ու բազմազան հարցեր: Ռեֆերատներով հանդես եկան ուսուցիչներ Ա. Սարգսյանը (ք. Մարտունի), Ա. Առուշանյանը (գ. Կա-



ղարծի), Ն. Սարգսյանը (գ. Մաճկալաշեն), Գ. Միրզաջանյանը (ք. Մարտունի), Ռ. Ավանեսյանը (գ. Ծովատեղ և Խերխան) և այլք:

Մեծ պատասխանատվություն է ուսուցիչ լինելը, այն էլ՝ ֆիզիկական կուլտուրայի. չէ՞ որ նրանց ձեռքում է առողջ ապրելակերպի, ֆիզիկական պատրաստվածության և արթուն մտքի բանալին: Պետք է կարողանալ ճիշտ և պատճառաբանված օգտագործել այն, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի հասու լինի առողջ ապրելակերպ, արթուն միտք բառակապակցությունների նշանակությունն ու անչափ կարևորությունը: Այդ մասին իր դիպուկ ու հետաքրքիր պատկերացումները տվեց Կաղարծու միջնակարգ դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ Արթուր Առուշանյանը իր «Առողջ ապրելակերպ» թեմայով ռեֆերատում, որն առաջին իսկ տողերից արժանացավ ընթերցողի ուշադրությանը:

Եթե ամեն ոք գիտակցորեն գործի, կունենանք առողջ, կոփված աշակերտներ՝ ապագա երկրպագուներ: Այո՛, ուսուցիչն իր իմացությամբ ու հմուտ վարպետությամբ պետք է կարողանա աշակերտների մեջ սեր սերմանել դեպի առարկան. այստեղ անհրաժեշտ է նաև ուսուցչի հոգեբան լինելը:

Թե ինչ տվեցին վերապատրաստման դասընթացները, հարցին ուսուցիչները միաբերան պատասխանեցին՝ դասավանդման նոր մեթոդներ:

Այո՛, ժամանակն է գերծ մնալ խումբացած մեթոդներից և շարժվել արդի կրթական պահանջներին համաբայլ:

Նանար ՊՈՂՈՍՅԱՆ
ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

ԱՐՑԱԽԱԾԻՆ ՀԱՅՐ

Ապրիլի 3-ին Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 դպրոցն իր հյուրընկալ պատերի ներքո ընդունեց Արցախի գրական օջախի վաստակաշատ ներկայացուցիչներից մեկին՝ բանաստեղծ Արկադի Թովմասյանին:

Դպրոցում արդեն ավանդույթ է դարձել անդրադառնալ արցախահայ գրողներին. չէ՞ որ մեր Արցախ աշխարհի աշակերտները, բացի հայ դասականներից, պետք է ճանաչեն նաև իրենց երկրում ապրող ու ստեղծագործող, իրենց երկրի մշակույթը զարգացնող մարդկանց:

Այս հանդիպմանը աշակերտները սպասում էին: Չանազան միջոցառումների ժամանակ նրանք շատ անգամ էին անդրադարձել Ա. Թովմասյանի բանաստեղծություններին և ցանկություն հայտնել հանդիպել սիրելի բանաստեղծի հետ: Եվ ահա նրանց երազանքն իրականություն դարձավ շնորհիվ դպրոցի տնօրինության ու հայոց լեզվի և գրականության մեթոդիավորման:

Միջոցառումը սկսվեց Ա. Խանյանի՝ Թովմասյանին նվիրված «Խաղաղ ու թեժ» բանաստեղծությամբ.

*Թեժ է, ոնց հրաբուխ,-
Ոսխներին վայ է,
Հայ է ոսից գլուխ,-
Արցախածին հայ է:*

Հաղորդավարը ներկայացրեց բանաստեղծի կենսագրությունը, ստեղծագործական ուղին, իսկ աշակերտներն արտասանեցին Ա. Թովմասյանի մի շարք բանաստեղծություններ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Արցախին ու նրա հերոս տղաներին նվիրված ստեղծագործություններին. «Իմ մայր հայրենիք», «Արցախից եմ ես», «Քննություն է, տղերք», «Ընկածների արյամբ», «Զգույշ քայլեք, մարդիկ» և այլն:

Աշակերտները բանաստեղծին անակնկալ մատուցեցին՝ մի հատված բեմադրելով նրա «Նահատակները ինչու են ժպտում» դրամայից: Շատ հուզիչ էր, հատկապես, գլխավոր հերոսների՝ Արթուրի և Արմենուհու սիրո խոստովանության հատվածն ու Արթուրի վերջին նամակը՝ ուղղված Արմենուհու:

Բեմադրության ավարտից հետո Ա. Թովմասյանը մոտեցավ բոլոր մասնակիցներին ու համբուրեց: Իսկ դաիլիճում նստած աշակերտներն անհամբեր սպասում էին այն պահին, երբ կթույլատրվեր հարցեր տալ իրենց սիրելի բանաստեղծին: Առաջին հարցը 1990թ. ապրիլի 24-ին Հայոց մեծ եղեռնին նվիրված չարտոնված հանրահավաքի մասին էր:

Ա. Թովմասյանը հետաքրքիր տեղեկություններ պատմեց այդ դեպքի մասին՝ թե ինչպես էին բոլորին ձերբակալել, իսկ իրեն մոռացել, թե ինչպես է ինքնակամ հանձնվել՝ չդավաճանելով իր ընկերներից, թե ինչպես բանտում գտնվելու ժամանակ ծնված երգը հիմն է դարձել նրանց համար:

Հարցերից մեկն էլ դրամայի ստեղծման մասին էր, ինչին բանաստեղծը պատասխանեց, որ դրամայի բոլոր կերպարներն ու դեպքերը իրական են, և ինքն ընդամենը հանդես է եկել խմբագրողի դերում:

Աշակերտները կլանված լսում էին նրան: Սա մի յուրօրինակ դաստիարակչական դաս էր նրանց համար:

Վերջում բանաստեղծը հաճելի անակնկալ մատուցեց՝ միջոցառման բոլոր մասնակիցներին նվիրելով իր գրքերը:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Սյրեփ. հ.1 հիմն. դպրոցի մանկապարտեզի կազմակերպության կազմակերպիչ

ՀԱՎԱՏԵ՛ ԼՈՒՅՍԻ ԴՈՒՌ

Ապրիլի 9-ին տոնական տրամադրություն էր տիրում Հացու հիմնական դպրոցում: Գարնանային տրամադրությամբ զարդարված դպրոցական բակում նշվում էր «Ձատիկը» քրիստոնյաների համար ամենամեծ, կարևոր և սիրված տոնը: Քրիստոնյաներիս համար այդ կարևոր իրադարձությունը աշակերտներին և հանրությանը տեղյակ պահելու նպատակով հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջարինե Բարսեղյանի նախաձեռնությամբ Հացու դպրոցում (աշակերտների ջանքերով) ներկայացվեց Ձատիկի տոնը:

Որքի աշակերտները՝ գարնանային ծաղիկների կերպարներով ներկայացրին տոնի խորհուրդը և բնության զարթոնքը:

Հավաքվածները ջերմություն, արևոտ գուրգուրանք ու հոգեկան մեծ բավականություն ստացան միջոցառումից:

Ամփստելի է ազգապահպանական արժեքների մեջ հավատի դերը, եկեղեցու հանդեպ մեր ժողովրդի ունեցած վերաբերմունքը:

Հայ Առաքելական եկեղեցին միշտ էլ մեր ժողովրդի համար փրկության, լույսի դուռ է եղել: Եվ ուրախ ենք, որ հոգևոր արժեքներն այսօր լայն հանրության սեփականությունն են դառնում:

Կարինե ՂԱԶԻՅԱՆ
Հացու հիմն. դպրոցի գրադարանավարուհի

Միջոցառմանը ներկայացել էին գյուղի հասարակության մեծ մասը՝ գյուղապետ Ա. Ղազիյանի հետ մեկտեղ:

Աշակերտները տոնին համահունչ հագուստներով, կրտսեր տա-

ՀԱԳԵՑԱԾ ՏԱՍՆՕՐՅԱԿ

Մարտի 17-27-ը Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում անց են կացվել ԼՂՀ հանրակրթական դպրոցների ուսուցիչների նախատեսարարական վերապատրաստման դասընթացներ: Նախաձեռնել էր ԼՂՀ ԿԳ նախարարությունը, պարապմունքները վարել են ՀՀ ԿԼԻ առաջատար մասնագետները: Լայնամասշտաբ դասընթացներին մասնակցել են հանրապետության տարբեր շրջաններից եկած շուրջ 900 ուսուցիչներ:

Օրակարգը խիստ հագեցած էր. պարապմունքներն ընթանում էին առավոտյան 8-10-ից մինչև 4-ը: Նշված ժամկետում պետք է յուրացնեինք նախատեսված ծրագրային նյութերը: Յուրաքանչյուր առարկայից կար 2-3 խումբ՝ 30-ական ուսուցիչներով:

Մասնակցությունը անցանք: Խմբի բոլոր անդամների կարծիքը հայտնած կլինեմ, եթե ասեմ, որ մենք անչափ գոհ մնացինք տիկին Գյուլազյանից. տպավորված էինք նրա վարած դասերով և, անշուշտ, կուզենայինք նորեն հանդիպել: «աշակերտել» նման մասնագետի: Շնորհակալություն ԿԳ նախարարությանը՝ նման դասընթացներ կազմակերպելու և դրանք բարձր մակարդակով անցկացնելու համար, Հայաստանից ժամանած մասնագետներին՝ մասնագիտական այցի համար, և կուզենայինք երևույթը շարունակական լինել, ավելի հաճախ հանդիպեինք՝ փոխանակելու մեր գիտելիքները, տարիների փորձը, մասնագիտական հմտությունը և նոր եռանդով կցվեինք մեր դժվարին, բայց և հետաքրքիր աշխատանքին: Արձագանքներ շատ կլինեն, քանի որ գրեթե բոլոր մասնակից ուսուցիչները գոհունակությամբ էին խոսում հետաքրքիր տասնօրյակից:

Ռ. ԱՌՈՒՆԵՍՅԱՆ
Հաղորդիչ շրջ. Մեծ Թաղերի միջն. դպրոցի կենսաբանության ուսուցչուհի

Օրակարգը խիստ հագեցած էր. պարապմունքներն ընթանում էին առավոտյան 8-10-ից մինչև 4-ը: Նշված ժամկետում պետք է յուրացնեինք նախատեսված ծրագրային նյութերը: Յուրաքանչյուր առարկայից կար 2-3 խումբ՝ 30-ական ուսուցիչներով:

Կենսաբանության առարկայական խմբերից մեկում պարապմունքներն անցկացրեց ՀՀ ԿԼԻ գլխավոր մասնագետ Վարսենիկ Գյուլազյանը՝ թեստային առաջադրանքների (ընթացիկ գնահատման թեմատիկ և կիսամյակային անփոփոխ) վերաբերյալ գրքերի և արակների հեղինակ: Նա իր կեցվածքով, գիտելիքների հա-

րուստ պաշարով, մանկավարժական նուրբ տակտով, մեթոդական ճիշտ մոտեցումով անմիջապես գրավեց մեր լսարանին: Մենք կլանված լսում էինք նրան, պատասխանում առաջադրված հարցերին, կատարում տարատեսակ առաջադրանքներ, որոնք բոլորն էլ վերաբերում էին ուսուցման նոր մեթոդներին (խմբային աշխատանք, խորանարդի մեթոդ, քառաբաժան մեթոդ, ապագայի անիվ, շրջայց պատկերասրահում և այլն): Խմբի անդամների միջև առաջացավ ընկերական ջերմ մթնոլորտ: Չնայած բոլորն էլ տարբեր տարիքի էինք, սակայն դա չխանգարեց աշխատել փոխօգնության և փոխհասկացողության մթնոլորտում: Երիտասարդ մասնագետներից իրենց գիտելիքների հարուստ պաշարով աչքի ընկան Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Մ. Սանթրյանը, Շուշիի շրջանի Քարինտակի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ս. Հովհաննիսյանը, Քաշաթաղի շրջանի Սարատակի և Աղածորի դպրոցների ուսուցիչներ Գ. Բարխուդարյանը և Հ. Սարգսյանը: Պարապմունքներն այնքան հետաքրքիր և բազմաբովանդակ էին, որ այդ

ՀԱՅՈՑ ՄԵՑ ԵՂԵՆՆ-97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՕՏԱՐԱԶԳԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Մի ողջ ժողովուրդ մեկ-մեկ թրատել, Մի ամբողջ անտառ արմատից հատել...

Պ. Սևակ

ՀՈՒՄՈՐ ԵՐԳԸ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՐՊ

1915-ի եղբրական ապրիլից ի վեր 97-րդ զարուհուն է բացվում Հայոց աշխարհի վրա՝ նորից վերարծարծելով ցավի ու կորստի անթելված մորմուռը:

Անվախճան է ժամանակի երթը, և դարից երկար ձգվող ցավի հիշողությունն իր մեջ ամփոփում է Մեծ եղեռնի կակիծը: Տարիների հետ նորանում են եղեռնագարկ սերնդի շարքերը՝ Հայ Դատի ծանր բեռը թողնելով իրենց հետնորդների ուսերին: Մերոնդները հաջորդում են իրար՝ միշտ բորբոք պահելով հատուցման պահանջն ու երգի կարողը, հույս փայփայելով, որ մի օր ազգը նորից կբոլորի բիրկիական լեռան շուրջը և Արարատին կնայի նաև այն կողմից: Դեռևս 20-րդ դարասկզբին Սիամանթոն Հույսը դարձրեց գրական հերոս, թեպետ հուսո երգը վաղուց էր դարձել հայ ժողովրդի կեցության կերպը:

Ապրիլյան այս օրերին աշխարհասփյուռ հայությունը ոգեկոչում է մեկուկես միլիոն անմեղ նահատակների հիշատակը, որոնք զոհ գնացին Թուրքիայի պանթուրանական նկրտումներին: Անմասն չի մնում նաև Արցախը: Ստեփանակերտում ապրիլի 19-ին Մուրացանի անվան քաղաքային գրադարանի կազմակերպած գրական-երաժշտական երեկոն նվիրված էր եղեռնագարկ գրողներ Գր. Չոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի և Ռ. Սևակի անմահ հիշատակին:

Դառնալով այդ ժամանակահատվածում ստեղծված հայ գրականությանը՝ անհնար է չնկատել, որ պոեզիան էր դարձել նրա էպիկենտրոնը և որ անցած դարի առաջին երկու տասնամյակում մեր պոեզիան 200 տարվա թռիչք կատարեց: Դա հայության հոգևոր ճիչն էր՝ կապված մահվան վտանգի հետ: «Հոգեվարքի և հույսի ջահեր» վառեց Բոցավառ տաղանդը՝ Սիամանթոն: «Գեղին սրտի» տրոփը վերծանեց Դանիել Վարուժանը՝ հայտնագործելով ցեղի հավերժացման խորհուրդը, որը վրեժի զգացում արթնացրեց և դաշույնի փիլիսոփայությանն ապավինեց ամենամարդասիրական մասնագիտությամբ գրողը՝ բժշկական գիտությունների դոկտոր Ռուբեն Սևակը՝ գալիք սերնդին կտակելով, թե ազգը պիտի ապավինե իր բազկի գորուքային: մարդկային հոգու թաքուն խորխորատները թափանցեց և նրանց «լուռ ցավերի» մասին բարձրաձայնեց Նորավեպի իշխանը՝ Գր. Չոհրապի: Այդ սերնդի մտավորական սերունդը առաջինը կրեց մահացու հարվածը: Ազգը գլխատվեց, երբ մի գիշերում 200 մտավորականներ ձերբակալվեցին և սպանվեցին բանտերում ու քարոզներում: Գրող, հրապարակախոս, «Ազատամարտ» թերթի խմբագիր Ռուբեն Չարախյանը, արձակագիր, բանաստեղծ, գրաքննադատ, արվեստաբան Տիգրան Չոլկոյանը, արձակագիր, հրապարակախոս, մանկավարժ, խմբագիր Երուվանդ, Տիրան Չրաքյանը (Ինտրա) և բազմաթիվ գրողներ ու մշակույթի գործիչներ կիսեցին ժողովրդի ճակատագիրը:

Բացելով միջոցառումը՝ Մուրացանի անվան քաղաքային գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանն անդրադարձավ մարդկության դեմ երբևէ գործած այդ մեծագույն ոճրին: «Ապրիլ ամիսը զարման ամենածաղկուն ամիսն է, բայց հենց ապրելու ապրիլին թուրքն իրագործեց մի ողջ ժողովրդի ոչնչացնելու, սպանդի ենթարկելու հրեշավոր ծրագիրը: 97 տարի շարունակ մենք պահանջատեր ենք, բայց աշխարհը խուլ է մեր ցավի դեմ: Փառք ու պատիվ այն անհատներին ու պետություններին խորհրդարաններին, որոնք հաստատել և դատապարտել են հայոց ցեղասպանության փաստը»:

Երեկոն վարող Անետա Համբարձումյանը ներկայացրեց Սիամանթոյի, Վարուժանի, Սևակի և Չոհրապի կյանքի ու գործունեության առանձին դրվագներ: Իսկ մայրաքաղաքի տարբեր կրթօջախների սաներն ի-

րենց ասունքով, երգով ու պարով անոռանալի դարձրին երեկոն: Ասպարնը, Սուրենը, Ռուզաննան, Բելան, Լաուրան ու Հասմիկը ներկայացրին մի գեղեցիկ փունջ նրանց ստեղծագործություններից: Երեկոյի ծրագիրն այնպես էր կազմված, որ թափածո ու լավատեսությունը միմյանց ներխուժելով՝ հեռու էին վանում վիատությունը և հայրենասիրական երգերի հզոր շնչով վարակում ներկաներին: Մայրաքաղաքի հ. 3 և հ. 10 դպրոցների մի խումբ սաներ հանդես եկան հայրենասիրական երգերի շարանով: Աղջիկները նաև գեղեցիկ պար էին բեմադրել հայտնի «Կիլիկիա» երգի երաժշտության ներքո: Երեկոյի ավարտին ելույթ ունեցավ Ստեփանակերտի հ. 8 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռուզաննա Աբրահամյանը, ով անդրադարձավ խտորաբանի վրիժառու Արտաշես Ծաղիկյանին՝ հայ ժողովրդի դահիճ Ջենալին սպանողին, պատմեց թուրք գրող Քենալ Յալչընի մասին, ով իր «Կյանքս քեզ մոտ կը խայտա» գրքում ապաշխարանքի այսպիսի խոսքեր է մրմնջում: «Ես գլուխս կը խոնարհիմ ավեզարդ Մասիսին և տաղանդավոր հայ ժողովրդին առջև, ներողություն կը խնդրեմ իմ նախնիների գազանությունների համար»: Ապա հետաքրքիր մանրամասներ ներկայացրեց Ռ. Սևակի կնոջ՝ Յաննի Ապելի մասին, ով երես թեթելով իր հայրենիքից՝ Թուրքիայի դաշնակից Գերմանիայից, իր զավակներին էլ դաստիարակեց այդ ոգով:

Դահլիճում տիրող ոգեղեն մթնոլորտից հուզված էին բոլորը, ու թեպետ տամկացել էին ներկաների աչքերը եղերաբար գոհված մեր համաքրների թերթվածներին վերստին առնչվելուց, իշխողը լավանությունը չէր, այլ հպարտության գիտակցումը, թե յուրաքանչյուրս համաքրներ սերող ազգի ոգեծառանգորդն է: Հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի Նաիրա Թամրազյանը ներկաների անունից շնորհակալություն հայտնեց գրադարանի տնօրեն, մշակույթի ոլորտի ամխոջ մշակ Մ. Խաչատրյանին, ապա անդրադարձավ Արաքսի Թաշճյան և Դանիել Վարուժան զույգին ու նրանց զավակների ինտագա ճակատագրին:

Անցավ կարևոր է մնան միջոցառումների դաստիարակիչ դերը մատաղ սերնդի ձևավորման գործում: Մուրացանի անվան քաղաքային գրադարանը այն սակավաթիվ մշակութային օջախներից է, որը կարողանում է իր շուրջը համախմբել արվեստի ու գրականության սիրահարներին՝ դառնալով մտավորականության, դպրոցականների և ուսանողության սիրած հավաքատեղի:

ՀՊԳԵՎՈՐ ԳԱՆՁԵՐԻ ԽԱՉՔՈՒՆ՝ ՄԵՑ ԵՂԵՆՆԻ 97-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Մեծ եղեռնի 97-րդ տարելիցին էր նվիրված նաև Արցախի պետական կամերային նվագախմբի ապրիլի 19-ին կայացած համերգը: Ծրագրում՝ միջնադարյան հայ քնարերգության գոհարներ, շարականներ ու մեղեդիներ: Նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, հանրապետության վաստակավոր արտիստ Գ. Մուրադյանը երևանից հրավիրել էր սոպրանո Իրինա Ջաքյանին և ասունքող, ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաչաթյանին: Որպես մենակատար՝ համերգին մասնակցում էր նաև արցախցի ֆլեյտահար Արտաշես Գրիգորյանը: Ներկայացնելով համերգային ծրագիրը՝ Ս. Նաչաթյանը մանրամասնեց. «Այսօրվա ողջ համերգային ծրագիրը նվիրվում է Մեծ եղեռնի 97-րդ տարելիցին և Արցախյան ազատամարտի բոլոր նահատակների հիշատակին: Այն կազմված է միայն միջնադարյան տաղերից, շարականների մեղեդիների և քնարերգության լավագույն նմուշներից՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Սալաթ-Նովա»: Ապա ասունքողն անդրադար-

ծավ հայ երգին, որի արմատները հին են նույնքան, որքան հայ ժողովրդինը. երգերում են արտահայտել իրենց ամենամկրահական խոհերն ու զգացումները միջնադարի երաժիշտ բանաստեղծները և հոգևոր արվեստի մշակները:

Համերգի ընթացքում հնչեցին Ս. Պարթևի, Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Գր. Նարեկացու, Ն. Քուչակի, Մ. Նաղաշի և Սալաթ-Նովայի ստեղծագործություններից՝ Ս. Նաչաթյանի կատարմամբ: Ընտրությունն էլ ասունքողինն էր. «Մաշտոցից մինչև Սալաթ-Նովա» ընտրել էի ծանոթ, և՛ անծանոթ ստեղծագործություններ, և դա միտումնավոր էր արված՝ որոշ բաներ վերհիշելու, որոշներն էլ նոր ծանաչելու, որովհետև, կարծում են, հիմա ոչ բոլորն են կարողում միջնադարյան պոեզիա: Շատերն անգամ ժամանակակից գրականությանը ծանոթ չեն, ուր մնաց միջնադարյանին, որը ես պաշտում եմ: Նմանապես պաշտում են արևմտահայ պոեզիան. երկուսն էլ իրաջք են»:

Հայ հոգևոր երգի անանց հմայքով ունկնդրին գերեց երգչուհի Իրինա Ջաքյանը, ուն հրաշալի մեկնաբանությամբ հնչած շարականները մի առանձին շուք հաղորդեցին համերգին: Սալաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգով եզրափակվեց համերգը, որն ամբողջովին հոգևորի փառաբանություն էր, հոգևոր և աշխարհիկ երգի հրաշալի համամակա: Համերգի հոգևոր հզոր լիցքն ապահովեց նաև նվագախմբի հրաշալի կատարողականությունը: Նշենք, որ երգչուհին քանիցս ելույթներ է ունեցել Արցախի պետական կամերային նվագախմբի հետ և ամեն անգամ գերել ունկնդրին կատարողական վարպետությամբ ու գեղեցիկ ձայնով: Անհնար է առանց հուզմունքի լսել հայ հոգևոր երգը, որը հիրավի կատարելություն է իր պարզության մեջ: Միայն այն մտքից, որ տասնյակ դարեր առաջ ստեղծված այդ երգերով մեր նախնիները Արարչի հետ տիեզերածավալ գրույց են բացել ու դարերի մուժն ու խավարը ցրելով հասցրել մեզ, ամենեկնեի զգացումներ են հորդում երթանդ մեջ՝ ստիպելով երկրպագել ոչ միայն Տիրոջը, այլև այդ գանձերն արարող ժողովրդին: «Հայ հոգևոր երգը իհարկում է ոչ միայն մեզ, այլև օտարներին», - մեզ հետ գրույցում ապացուցեցին: «Մեր հոգևոր երգը լսելիս նրանք լաց են լինում: Շատ տարիներ առաջ երգչախմբերից մեկում երգում էի և Իտալիայում մասնակցեցի հոգևոր երգեցողության երգչախմբերի մրցույթին: Երբ մեր երգչախումբը կատարեց Մ. Եկմայանի «Սուրբ-Սուրբը», ժյուրին հուզմունքից լաց էր լինում, և մենք առաջին տեղը գրավեցինք: Եվ պատահական չէ, որ ամեն տարի մասնակցելով մեզ մրցույթների՝ մեր երգչախմբերը միշտ հաղթանակով են վերադառնում»:

Ժամանակները բարենպաստ չեն հոգևորի համար, իսկ այսպիսի համերգները մեր ինքնությունն են նորոգ պահում և վերադարձնում մեզ մեր ակունքներին: Հայաստանում թե Արցախում օրեցօր ծաղկող տարանուն ու բազմադեմ աղանդները բառացիորեն կլանում են մարդկանց: Քրիստոնյա Ռուսաստանում սատանայական կրթերն են մուլեգում. եկեղեցիներում ինչ-որ «պանկ» հորջորջվող աղջիկներ են պարում կամ սրբապատկերներ կացնահարվում, Տիրոջ տան պատերն են պղծվում անվայել գրություններով... Դարը դաժան է, բայց դարերով ստեղծված հոգևոր արժեքների պահպանությունը մեր ձեռքին է, - վստահեցնում է Ս. Նաչաթյանը. «21-րդ դարում դժվար է պահել ազգի դիմագիծը, դարերի ընթացքում մեր ժողովրդի ստեղծած համամարդկային արժեքները և այդ գանձերը հանձնել հաջորդ սերունդներին: Հավատանք, որ այդ գանձերը չեն կորչի, ինչպես հավատում ենք, որ Քրիստոսը պիտի գա»:

ՄԵԼԱՆԿԱ ՄԻՆՈՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Մ Ա Ն Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Մ Ն Ե Ր

Սուսաննա ՍԱՀԱԿՅԱՆԸ ծնվել է 1998թ. ավարտել է Երևանի հայկական գյուղատնտեսական ակադեմիան՝ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Երկրորդ բարձրագույն կրթությունը՝ «Տարրական կրթության մասնավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ, ստացել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում: 2005-ին ավարտելով՝ աշխատանքի է անցել Ասկերանի շրջանի Նախիջևանի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի: Ստեղծագործում է ուսանողական տարիներին:

ՏԱՆՁԵՆԻՆ

Նստած եմ տանը: Դրսում անձրև է մաղում, քամին ծառերի կատարներն է օրորում, երկինքը կապարի նման կախվել է երկրի վրա: Տեղ-տեղ թանձր, տեղ-տեղ թափանցիկ մշուշ է լողում: Լուսամուտի ապակիները թաց են: Անձրևի կաթիլները հավելվել ասպակուն, իրենց համար առանձին հուն են բացում վար՝ ենթարկվելով երկրի ձգողության ուժին: Մշուշի հետևում թույլ կանաչին է տալիս լեռնալանջը՝ ծածկված ծառախիտ անտառով: Նայում են երկար, վայրկյանները սահուն է են արագ, իմ խոհերին անհաղորդ... Ես արդեն հեռվում եմ, այլ ժամանակում և այլ տեղ...

Մի շաբաթ առաջ էր: Գնացիք կրմիր գույնի: Ընկերներս արագ բարձրանում են սարն ի վեր: Ես քայլում եմ դանդաղ: Ստեպ-ստեպ շրջվում: Յուրաքանչյուր քայլի հետ իմ մեջ ամեն ինչ փոխվում է: Գարնանային արևի ճառագայթները «խայթում են», քրտինքը թրջում է շապիկս, շնչառությունս արագանում է... Սակայն ես ինձ ուրիշ մարդ եմ զգում: Ես հասարակ մահկանացու չեմ այլևս: Ես... Ես այս լեռան տիրուհին եմ, իմ հագին արքայական ծիրանի է, ես հզոր եմ, իմ ձեռքին ոչ թե ճակպի մահակ է, այլ արքայական գավազան:

Տեսիլք է՝ ողջ աշխարհը ոտքերիս տակ: Միտս արագացնում է զարկերը: Նրա մեջ գարնան ավիշ է լցվել, պատրաստ է թռչել արտույտի նման: Ես այնքան մոտ եմ երկնքին, որ թվում է, եթե մեկնեմ ձեռքս, ամպը կբռնեմ:

Ժամանակը չի սպասում: Ընկերներս ձայնում են: Նրանք չգիտեն, իսկ ես զնում եմ ոչ այնքան կրմիր գույնի հավաքելու, որքան առօրյա հոգսերը (զոնե մի քանի ժամով) մոռանալու, գնում եմ մանկանալու: Շարժվում եմ արևմուտք: Յոթ սար, յոթ ձոր այն կողմ մի գետ կա, գետի ափին նույնանուն փոքրիկ քաղաք՝ շրջապատված լեռներով: Այնտեղ ես ծնվել եմ: Կարող եմ կանչում է այնտեղ, բայց... Քայլում եմ...

Մտնում եմք անտառ: Եթե դրախտը կա, ամենայն հավանականությամբ, այսպիսին է: Ծնչելը երանություն է, օդը հագեցած մանուշակի, վայրի վարդի բույրով: Ծառերի տերևներին, ծաղիկների բաժակներին ցող է նստել, արևը դրանք փոխակերպել է աղամանղների, ծիածանների: Թռչունները ծվվում են, տերևները մեղմ սվվում:

Բավական խորացել եմք անտառում...

Հանկարծ համատարած կանաչի մեջ՝ ծաղկած տանձենի, ավաղ, գետնին մեկնված: Ասես հարսամիջի փախած հարս լինի, որ հարմար թաքստոց է գտել և որոշել է մի քիչ ննջել: Մի պահ սարսափում եմ, մի՞թե անգուր կացիքն չի խոչնդել նույնիսկ ծաղկած ծառին: Մոտենում եմ, կացիք ոչ մի հետք... Ըստ բնության, բանականության օրենքների, ծառը վաղուց մեռած պիտի լիներ, բայց ապրում է, նույնիսկ ծաղկել է: Տապալված ծառը ճյուղերով հենվել է հողին, իսկ բունը մի փոքր մասով միայն կապված է արմատներին: Կապան արմատների և ճյուղերի միջև, թող որ շատ փոքր, կա: Արմատներն այդ փոքրիկ միջանցքով

տալիս են ծառին այն, ինչ վերցնում են հողից, ապահովում ծառին ջրով: Ծառի ճյուղերը խրվել են հողի մեջ և ապագա մեծ ծառերի հիմք են արդեն: Հին արմատները չեն զլանում օգնել նրանց մայրենի հողում նոր արմատներ ձգել: Ծառի կոտրված տեղում որդեր ու միջատներ կան: Նրանց գործունեությունը կքայքայի, կքանդի մայր արմատի և ճյուղերի վերջին կապը, սակայն անգոր է «սպանել» ծառը: Կոտրված մասից ներքև նոր շիվեր կան: Նրանց գոյությունն ապացուցում է՝ ծառը կապիր: Շուտով (զուգե հենց եկող տարի) կծաղկեն նոր ընձյուղները: Հմայված բնության այդ հրաշքով, մտածում եմ մարդկանց մասին, նրանց՝ ովքեր տարբեր պատճառներով կրում են հայրենիքը: Քանի կա կապը «արմատների» հետ, նրանք «ծառ» են, հայրենիք ունեն, սակայն երբ կտրվում են արմատներից և հեռանում հայրենիքից, դառնում են վառելիքայտ, ցեյուղուղի հունք, կահույքի մաս: Նրանց օտարներն օգտագործում են ըստ իրենց հայեցողության...

ԾՈՒԾԱՆՆԵՐԸ

Արդեն մի շաբաթ է, կարճատև անձրևներ են տեղում: Երկինքը երբեմն-երբեմն բացվում է ու... Երկրի ու երկնքի միջև ծիածաններ են երևում (միանգամից երեքը): Նրանք անչափ գեղեցիկ են: Այնքան գեղեցիկ, որ ոչ բանաստեղծի գրիչը, ոչ նկարչի վրձինը կարող են նկարագրել: Աչքերիս տեսածից սիրտս գարնան արևից տաքացած բողբոջի նման սառչում է, թթոթում բերկրանքից, իսկ ձեռքերս սկսում ծզվում են դեպի երկինք: Ուզում եմ գրկել բնության այդ հրաշքը, թեկուզ մի քանի վայրկյան լինել նրա նման գեղեցիկ, մեծ, հոգեցունց:

Ազգայն տարագիր Աստված պահպան... Հուրթերս երգում են, իսկ միտքս կտրում է երկինքները ժամանակի: Ծիածանը ինձ մանկացնում է, դարձնում անմիջական ու զգացմունքային:

Երբ փոքր էի, հավատում էի այն հեքիաթին, թե ծիածանի տակով անցնող աղջիկը տղա է դառնում: Հավատում էի, և երբ երկնքում հայտնվում էր ծիածանը, ամեն ինչ մոռացած վազում էի դեպի նա: Ինձ անհրաժեշտ էր տղա դառնալ: Անհրաժեշտ էր հաց ու ջրի, օդի պես:

Ես երագանքներ ունեի, որոնք իրազործելու համար անհրաժեշտ էր լինել ուժեղ, խելացի տղամարդ (համեմայն դեպս, ինձ այդպես էր թվում): Պապիս հորեղբոր կինը միշտ հեղուկ էր իրենց երգերը: Նրա պատմածներից ես իմացա, որ աշխարհում պատերազմներ են եղել, եղել է 1915 թիվ և հայոց կոտորած, որ ինձ գերող ու իրեն ձգող ճերմակազարդ լեռը՝ Մասիսը, մերն է եղել՝ հայի հող էր, ամօրեններից անարգված: Այդ ամօրենները տեղահանել, կոտորել էին այդ հողի օրինական տերերին:

Ես հավասարապես ատում էի և թուրքերին, և ամերիկացիներին: Վերջիններին ատում էի, որովհետև թիկունք են կանգնել այդ արմախում ու բարբարոս ցեղին, Մասիսի լանջերին ռազմական բազաներ հիմնել և դեռ քիչ է, հրթիռներն ուղղել են իմ հայրենիքին:

Ես երագում էի մեծ լինել, ուժեղ, հզոր, տեխնիկապես լավ զինված բանակ ունենալ, փշրել Մասիսը գերող շղթաները, վերակառուցել պապիս հայրական տունը Սալախան գյուղում: Ես երագում էի տեսնել Վարազա ճող-ճող աղոթարանը, Արտամետի խնձորի այգի տնկել... հետո հոգնած, վաստակած պառկել խոտերի մեջ ու մայրամուտը դիտել, տեսնել ինչպես է արևը մտնում ծովի գիրկը: Հետո վառել թոմիրը, վաճառառեխ խորովել, տաք-տաք բաղարջով սառը թան խմել, պառկել տան կտրին, ծածկվել մթնշաղի քողով ու նայել աստղերին: Նայել, նայել... Լսել պապիս կեքիաթները:

Արթնավառ արևածագից առաջ, բաժն ուսել ու վերադառնալ այգի, կեսօրին հանգստանալ ուռենու շվաքում... Հացի

նստել մեծ գերդաստանով:

Ավաղ, ծիածանը շուտ էր անհետանում, թողնելով հույսերն իմ խաբված, երազներն անկատար: Հետո ես հույս ունեի, որ իմ իղձերը կիրականանան, երբ մեծանան եղբայրներս, բայց...

Հիմա ես երեք տղաների մայր եմ և հաստատ գիտեմ, ծիածանն ինձ չի կարող օգնել: Սակայն իմ հույսերը չեն մարել, կարոտի կապույտ երգը դեռ հոսում է իմ երակներում: Ամեն բարոյր իմ տան մեջ իմ հույսերի նոր ծաղկազարդ գարուն է, որ բերքառատ աշուն է խոստանում: Ամեն նոր ծիածան կամուրջ է իմ ներկայի ու անցյալի միջև: Ամեն ծիածան ինձ հետ քայլող իմ մանկությունն է: Ծիածաններ՝ արևի սոնատը անձրևի կաթիլներից, արևի համբույրը ցողից: Ծիածաններ, կանգնեք հավիտյան...

ՉՆԾԱՂԻԿՆԵՐԸ

Գարուն է, գարնան առաջին օրը, մարտի մեկը:

1989թ. հուլիսից ես դարբաղցի եմ: 1990թ. մարտի մեկից ավանդույթ է դարձել, այդ օրը գնում եմ ճնձողկի: Շատ հեռու չեմ գնում, տունը լեռան լանջին է, տան «թիկունքում» սկսվում են լեռան զազաթը տանող արահետները: Գնում եմ և այս տարի (1998թ.): Գնում եմ: Հոգիս թևում է վեր, որովհետև ոտքերս քարշ են գալիս նրա ետևից: Գնում եմ, թռչում եմ...

Շիրազի «Թագադրումն» է շուրթերիս:

Հողը դեռևս գորշագույն է, տեղ-տեղ միայն կանաչ ծիլեր են երևում: Ուրցի ուժեղ բուրմունք կա օդի մեջ: Գարնան բուրմունք կա օդի մեջ, չնայած ցուրտ է, և ձմաբեր ամպեր են կախվել երկրի վրա: Գարուն կա ուրցի բույրի հողից ելնող գոլորշու մեջ: Ահա առաջին ճնձողիկը՝ մրսած, թրջված, համել է գլխիկը հողից: Արև է ուզում, կապտավարդագույն ծաղկեպսակ է բացել, և բաժակները տերևների ցողի համար արևի առաջ: Իսկ արևը ամպի ետևում է:

Ես պոկում եմ ճնձողիկը հողից: Պոկում եմ ու կրծքիս տակ սուր ցավ զգում: Ծնկում եմ... Ես ընդամենը մի ծաղիկ պոկեցի... Ընդամենը մեկը: Նրան պոկելիս մտածում էի մարդկանց մասին: Նրանց, ովքեր տարբեր պատճառներով պոկվում են իրենց մայր հողից: Իմ մասին էլ...

Այնուամենայնիվ, բավական ճնձողիկ եմ հավաքում և շրջվում արևելք: Հրճվանքից սիրտս պատրաստ է լքել իր բույնը: Լեռն ինձ գահ է թվում, երկնամերձ գահ, իսկ ես՝ մեծ, կայարտ, գեղեցիկ... Ես տիրուհին եմ լեռան, այս գարնան, թող որ միայն մի պահ, մի քանի վայրկյան...

Դանդաղ իջնում եմ: Շուրթերիս Շիրազի «Գարնանամուտն է»:

Ու գարունը կրծքիս տակ, Սարից իջա ես...

Ես իջնում եմ գյուղ, իջնում եմ մթնշաղի հետ, և ինձ հանդիպող մարդկանց գարուն ավետում: Ծնձողիկներ ըմպում: Նրանք ընդունում են ճնձողիկները, ժպտում են ու մի պահ մոռանում հոգսերն առօրյա: Ժպտում են և ես:

Ես մեծ հրաշագործ եմ, ես մարդկանց ժպիտ են պարզում: Նրանք իրենց լավ են զգում այդ պահին, իսկ ես... Երջանիկ եմ: Մարդուն ինչքան քիչ և որքան շատ բան է հարկավոր երջանիկ լինելու համար:

Հիմա նայում եմ իմ սեղանին դրված ճնձողիկներին, և իմ մեջ գարունը նոր ալիք է տալիս: Ներեցեք ինձ, ճնձողիկներ, խնդրում եմ ներեք, որ պոկեցի ձեզ: Ընդհակառակ եմ ձեզ, անչափ շնորհակալ: Դուք օգնեցիք թեկուզ մի պահ անչափ երջանիկ լինել: Ընդհակալ եմ: Իմ սեղանին դրված եմ դրոճգանի ծաղիկները և Մասիսի նկարը: Չեք ծաղիկները երբ կլինեն իմ սեղանին, Մասիս, Վարազ, Սիփան, Առնոս... Ե՞րբ եմ պիտի ձեր կանջերին ծնկեմ, ձեր ծյունով կնքվեմ, ձեր ծյունով քնեմ, ե՞րբ...

ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՕՏԱՐԱԶԳԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

14 թյունը դատապարտել են նաև թուրք գործիչները: Թուրք իրավապաշտպան, հրատարակիչ Ռաջիբ Չառակչուլուն հիմնավոր փաստերով ժխտում է երիտթուրքերի այն պնդումը, թե հայերը մեծ վտանգ էին ներկայացնում կառավարության համար: Նա միաժամանակ կոչ էր անում դատապարտել բոլոր ոճրագործությունները՝ դրանք՝ չկրկնվելու սկսվելով: «Մեր պետությունը մինչև հիմա էլ խուսափում է 1915թ. իրադարձությունների մասին լուրջ խոսակցություն սկսել: Ավելին, իրար հաջորդող կառավարություններն անընդհատ պնդում են, որ տեղի ունեցածը սոսկ դիպված է եղել և որ նախօրոք չի ծրագրվել: Պաշտոնական տեսակետը նույնիսկ մեղադրում է հայերին Օսմանյան պետությանը դավաճանելու, ռուսների հետ համագործակցելու համար, պնդում է, որ բռնազարթն անխուսափելի անհրաժեշտություն էր, հայերը մահացել են սոսկ կենցաղային վատ պայմանների, ճանապարհների անապահովության պատճառով: Նման մտայնությունը հիմնավոր չէ, 1915-ին ցեղասպանություն է տեղի ունեցել: Կայսրության բոլոր նահանգներից, կառավարության հրամանով, ամբողջ հայ ազգաբնակչությունը բռնությամբ տեղահանվել է, ըստ իշխանությունների՝ հայկական պետության հավանական ստեղծումը կանխելու համար: Մի՞թե կանայք, երեխաները, ծերունիները կարող էին վտանգ ներկայացնել: Եթե ցեղասպանության հանցագործները չեն դատապարտվում, նույնիսկ արդարացվում են, ապա նշանակում է՝ այնպիսի իրավիճակում, որը պետությունը վտանգավոր կհամարի, ոճիրը կարող է կրկնվել: Եթե 1915-ին Անատոլիայում ցեղասպանությունը չսանձազերծվեր, այժմ մոտ 15 միլիոն հայ կապրեր իր բնօրրանում: Ցեղասպանությունը վերացրել է ոչ միայն ապրողներին, այլև նրանց, ովքեր պիտի ծնվեին: Այն միաժամանակ մշակույթ է ոչնչացրել»:

Հայոց ցեղասպանությունը դատապարտած թուրք նշանավոր գործիչներից է նաև պատմաբան Թամեր Աբջանը: «Թուրքիայի ներկա հանրապետության հիմնադրման անհրաժեշտ նախապայմանը մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը դարձավ: Պետության ստեղծողների մի մասն ուղղակիորեն մասնակցում էր հայկական կոտորածներին, մյուս մասն էլ հարստացել էր նրանց ունեցվածքը թալանելով: Մի երկիր, որ պատմակառուցում էր մի ուրիշ ժողովրդի բնաջնջումով, կարո՞ղ է հանդուրժել, որ իր տարածքում խաղաղ գոյակցեն ազգային տարբեր փոքրամասնությունները: Ահա պատմական այս ճշմարտության հետևանքով է, որ մենք այսօր զուրկ ենք քաղաքական արդարությունից ու դատապարտված ենք բարբարոսի խարանդ կրելու»:

1915թ. կատարվածը ոճիր էր, անհոգի թափուկների տենչ, հաճույք՝ հիմնված մահվան ու արյան վրա: Ու հիմա էլ, այս ամենից հետո՝ դժվար չէ կանխատեսել մեր ազգի ապագան, որովհետև ամեն ինչ ակնհայտ է: Նա միշտ էլ շրջապատված կլինի թշնամիներով, միշտ էլ կլինեն բախումներ, զոհեր, ջարդեր, բայց արդեն ոչ թե լռությամբ, այլ հակահարվածով: Աստժո կամոք նրանք կստանան իրենց արժանի պատիժը, իսկ հայը կապրի ու կբարգավաճի: Քանզի ժամանակը միշտ էլ ծնում է իր քաջ ու հերոս գավակներին: Քանզի մեր նախահայրերն ու մեր նահատակված քաջ մարտիկները սլացել են վեր, դեպի անձայրածիր տիեզերք և որպես սասող արդարության, լուսավորում են մեր ճամփան և կոչ անում համայն աշխարհին՝ ուշքի գալ, ընդունել ճիշտը, վերականգնել արդարությունը:

Երեք տարի հետո լրանալու է եղեռնի 100 տարին: Սակայն հուսով եմք, որ 100-րդ տարելիցին ապրիլի 24-ը նշելու ենք ոչ թե որպես եղեռնի զոհերի հիշատակի, այլ պատմական հայրենիքի վերադարձի օր: Հուսով ենք նաև, որ մեր մեծ հաղթանակը մեծ հանդիսավորությամբ կտոնվի Սասունում, Մուշում, քաղաքամայր Անիում:

Մարինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Տողի Վ. Գրիգորյանի անվ. միջև. դպրոցի պատմության ուսուցչուհի

ՉՈՆ ՀԱՐԱՉԱՆՆԵՐԻՍ

Սիրտն իմ հինգ սյուն ունի ապառաժ, Հինգ սիրտ հեմարան, հինգ սրբություն Հայր, մայր, եղբայրներ և քույր, Որոնց համար դողում եմ ամեն վայրկյան:

Այսօր տոն է մեր տանը՝ ծննդյան օր, Հավաքվել են բոլոր հարազատներս... Թեև այսքան հեռու, խրամատում անշուք՝ Սրտով ես ձեզ հետ եմ դարձյալ:

Հայր իմ, քույր իմ, իմ ընտանիք, Եղեք միշտ հպարտ ու երջանիկ, Կամ ու կլինեն հայրենյաց պաշտպան, Թող Աստված էլ լինի ձեզ պահապան:

Ջորայր ԱՐԲԱՅԱՄՅԱՆ ԼՂՀ ՊԲ շարքային զինծառայող

ԶԱՆԱԶԱՆ

ԿՐԿԻՆ «ՍՈՍԵ»-ՈՒՄ

Կանանց միասնական ցվիրված՝ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզում տեղի ունեցավ խաղ-մրցույթ՝ «Ես և մայրիկս»:

Բացման խոսքով հանդես եկավ մանկապարտեզի տնօրեն Նելլի Ղուլյանը:



Շնորհավորելով բոլոր կանանց և մայրերին տոնի առթիվ՝ մաղթեց նրանց անհոգ, երջանիկ գարուններ և հաճելի ժամանակ կայանալիք միջոցառմանը:

Ինչպես նշվել է բազմիցս, մանկապարտեզում արդեն բարի ավանդույթ է դարձել Արցախում ընդունված տոն և հիշատակի օրերի կապակցությամբ կազմակերպել հանդեսներ, միջոցառումներ:

Դաստիարակների կողմից կազմակերպված խաղ-մրցույթի մասնակիցները մայրեր էին՝ իրենց փոքրիկներով: Մրցում էին 2 թիմեր՝ «Կակաչները» (ավագ) և «Արևիկները» (միջին): Յուրաքանչյուր թիմ բաղկացած էր վեց մայրիկներից և վեց երեխաներից: Հաղորդավարները դաստիարակներն էին: Միջոցառումը գնահատելու համար ստեղծված էր համաձայնաբեր հետևյալ կազմով՝ ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության անդամ, ՀՕՄ-ուհի, տնօրեն և 2 խմբերից մեկական ծնողներ:

Մայրիկներին և փոքրիկներին համար նախատեսված էր վագել, ցատկեր, սողանցել, ցույց տալ իրենց խոհարարական հմտությունները, կար նաև ինտելեկտուալ բաժին: 2 թիմերն էլ հմտորեն և ջանասիրաբար հաղթահարում էին դժվարություններն ու խոչընդոտները: Մրցույթին հատուկ գեղեցկություն էր հաղորդել դահլիճի ճաշակով ձևավորումն ու մասնակիցների միատեսակ համազգեստը:

Թիմերի կազմը սահմանափակ էր, բայց դա չէր նշանակում, թե մնացյալ երեխաները չպետք է մասնակցեին միջոցառմանը: Ընդհակառակը, նրանք իրենց մասնակցությամբ առանձնահատուկ

շքեղություն էին տալիս միջոցառմանը: Յուրաքանչյուր մրցութային համարից հետո, որպես ընդմիջում նրանց էլույթներն էին՝ մանկական և ժողովրդական երգեր ու պարեր, հումորային համարներ, ասունը: Բոլորի համախմբված ուժերով միջոցառումը անցավ բարձր մակարդակով, չնայած թիմերը թե՛ս պայքար էին մղում հաղթանակի հասնելու համար:

Ժյուրիի որոշմամբ մի քանի միավորի առավելությամբ հաղթող ճանաչվեց «Կակաչներ» թիմը: Բայց «Արևիկները» չընկճվեցին: Գոտեպնդող խոսքերով էլույթ ունեցավ ժյուրիի անդամ, տնօրեն Նելլի Ղուլյանը:

Մրցույթ-միջոցառումը մեզ շատ հաճելի և ուրախ պահեր պարգևեց: Շնորհակալություն բոլոր մասնակիցներին, կազմակերպիչներին: Չնայած միավորներով հաղթեցին «Կակաչ» խմբի սանիկները, բայց կարևորը դա չէր, կարևորը մասնակցությունն էր, հետաքրքիր ժամանցը և առողջ ու խելացի սերունդ դաստիարակելու մեր դաստիարակների ցանկությունը:

Երկու խմբերի բոլոր երեխաներին անակնկալ մատուցեց ՀՕՄ-ի գրասենյակը՝ բաժանելով նրանց խաղալիքներ: Իսկ մասնակից մայրիկներին նվիրեց վերնաշապիկներ:

Մաղթենք ստեղծիչներին նորահոր, նախադեպը չունեցող մտահղացումներ և դրանց իրականացում:

Էմմա ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՔԱՆԻ ԼԵԶՈՒ ԳԻՏԵՍ, ԱՅՆՔԱՆ ՄԱՐԴ ԵՍ...



Օրերս Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի 3-րդ «ա» դասարանի աշակերտներն անգլերենի իմացությամբ հաճույք պատճառեցին ունկնդիրներին: Անկաշկան դեր ու պարով, արտասանությամբ նրանք պարտական են անգլերենի ուսուցչուհի Գայանե Հայրիյանին, որը մանկավարժական պրակտիկայում զուգահեռ՝ դրսևորեց կազմակերպչական իր կարողությունները: Դպրոցի մուտքը, միջանցքը, դահլիճը, բեմը ստացել էին հետաքրքիր ձևավորում: Գ. Հայրիյանի աշխատանքի արդյունքը ճանաչում էր սեր, ուրախություն, անբռնազբոս մթնոլորտ:

Օտար լեզուների քաղաքային մեթոդավորման նախագահ Վ. Գրիգորյանի «տաղանդավոր երեխաներ են» խոսքի մեջ ամեն ինչ ամփոփված էր: Դպրոցի փոխտնօրեն Մ. Խաչատրյանը իր խոսքում կարևորեց այն փաստը, որ հենց այդ լեզվով Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Զ. Կոքսն առաջին անգամ արցախյան մեր արդար պահանջը հասցրեց միջազգային հանրությանը:

«Կիրթ սերունդը պայծառ ապագայի հուսալի երաշխիքն է», - ծնողների անունից երախտագիտության իր խոսքում նշեց Ս. Արզումանյանը:

Սրբեկ. հ. 5 դպրոցի օտար լեզուների մեթոդավորում

ԼՂ ԳՊՐՈՋԱԿԱՆՆԵՐԻ 4-ՐԴ ՄՊԱՐՏԱԿԻԱՎԱՅՈՒՄ

Համաձայն ԼՂՀ ԿԳՆ ՈՂ, ՖԴ և ՀԿԳԿ բաժնի 2012թ. ռազմամարզական միջոցառումների պլանի՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում անցկացվեցին ԼՂՀ դպրոցականների IV սպարտակիադայի ծրագրով աղջիկների ու պատանիների միջև բասկետբոլի հանրապետական մրցումներ:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների աղջիկների ու պատանիների հավաքականները: Թիմ չէր ներկայացրել Շահումյանի շրջանը:

Նախ մրցեցին աղջիկները՝ մարտիի 19-23-ը, այնուհետև պատանիները՝ 26-30-ը:

Մրցումների վերջին օրերին ենթախմբերում 1-4-րդ տեղեր գրաված թիմերը հանդիպեցին իրար հետ՝ վերջնական տեղերը որոշելու համար:

Եզրափակիչ խաղերի արդյունքներով որոշվեցին մրցանակային տեղեր գրաված հավաքականները:

Աղջիկների մրցապայքարում առաջին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի հավաքականը, երկրորդ տեղը՝ Հաղորդի շրջանի, իսկ երրորդ՝ Մար-

տունու շրջանի հավաքականը՝ հաղթելով Ասկերանի շրջանի հավաքականին:

Աղջիկների մրցումներում լավագույն խաղացող ճանաչվեց Նախշուն Շահնազարյանը՝ Ստեփանակերտ քաղաքի հ. 3 միջնակարգ դպրոցից:

Պատանիների մրցապայքարում առաջին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի հավաքականը, երկրորդ տեղը՝ Հաղորդի շրջանի, երրորդ տեղը՝ Ասկերանի շրջանի հավաքականը՝ հաղթելով Մարտունու շրջանի հավաքականին:

Լավագույն խաղացող ճանաչվեց Սևակ Սարգսյանը՝ Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցից:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, արժեքավոր նվերների. իսկ թիմերի անդամները՝ համապատասխան մեդալների:

Լավագույն ճանաչված դպրոցականները արժանացան պատվոգրերի և թանկարժեք նվերների:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳՆ փոխնախարար Ս. Ասրյանը:

ՀՀ ԳՊՐՈՋԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 6-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ

Մարտի 30-ից ապրիլի 2-ը Ստեփանակերտի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում տեղի ունեցավ ՀՀ դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի 3-րդ փուլը:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների մրցումներում հաղթող ճանաչված դպրոցների թիմերը: Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էին երեք տղա ու մեկ աղջիկ:

Համառ ու անզիջում մրցապայքարում մրցանակային երրորդ տեղը 10 միավորով գրավեց Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը 12 միավորով գրավեց Ստեփանակերտ քաղաքի հ. 8 ավագ դպրոցի թիմը:

Մրցումներում 14 միավորով հաղթող ճանաչվեց և Գյումրիում մայիսին կայանալիք եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք նվաճեց Քաշաթաղի շրջանի Գամձայի միջնակարգ դպրոցի թիմը (մարզիչ՝ Յուլիանես Յովհաննիսյան):

Դպրոցական շախմատիստներին հաճելի անակնկալ էր սպասվում: Հանդիսավոր փակման արարողությանը ներկայացել էր ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, ՀՀ շախմատի ակադեմիայի տնօրեն, հանրաճանաչ գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, որը սրտանց շնորհավորելով Արցախի պատանի շախմատիստներին՝ թանկարժեք նվեր-

ներ հանձնեց մրցանակային տեղեր գրաված թիմերին ու մաղթեց հետագա հաղթանակներ շախմատային մրցաշարերում:

Փակման արարողությանը ներկա էր նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության կառավարման խորհրդի նախագահ Աշոտ Ղազարյանը, որը նույնպես շնորհավորելով Արցախի շախմատիստներին՝ հաղթող թիմի բոլոր անդամներին նվիրեց անհատական համակարգիչներ:

Մրցումներում մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների ու դրամական պարգևների:

Պատվոգրերի արժանացան նաև լավագույն խաղացողներ ճանաչված Մանե Աղամյանը (Ստեփանակերտ քաղաքից) և Դավիթ-բեկ Յովհաննիսյանը (Քաշաթաղի շրջանից):

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Ս. Ասրյանը:

Հուսանք, որ Քաշաթաղի շրջանի Գամձայի միջնակարգ դպրոցի թիմը պատվով հանդես կգա օլիմպիադայի եզրափակիչ փուլում և ուրախություն կպարգևի բոլորին:

Մուրադ ՇԱՐՄԱՆՅԱՆ

«Լուսարարի» թիվ 3-4-ի գլուխկոտրուկի պատասխանները

Table with 8 columns (I-VIII) and 3 rows of numbers representing the crossword puzzle answers.

Ճիշտ պատասխանները ուղարկել է ԱրՊՀ Ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի մախտրատուրայի 1 կուրսի ուսանող Ժիրայր Գրիգորյանը

Footer containing contact information for 'Lousarar' magazine, including address, phone, and email.

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: